HDO, Band 15, Leiden, New-York, Köln, 1994.

Lehmann-Haupt C., Armenien einst und jetzt, II, Berlin-Leipzig, 1931.

Schröder J., Thezaurus Linguae Armeniacae, Amsterdam, 1711.

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Ի. Դեակոնովը վերականգնում է ուրարտ. *Ḫalditaiə նախաձեւ «Խալդին մեծ է» նշանակութեամբ. տե՛ս ПАН, 1968, стр. 235, прим. 116:

2 Ս. Հմայակեան 'Arubaǰne աստուածութեանը նուիրուած հատուածի ծանօթագրութիւններից մէկում (Հմայակեան, 1990, էջ 110-11. ծան. 87) հակուած է անմիջական կապ տեսնել 'Arubaǰne-ի եւ հնդիրանական Varuṇa-ի միջեւ, որ հաւանական չի թւում թէկուզ հնչիւնական առումով:

3 Ցատուկ շնորհակալութիւն ենք յայտնում Մ. Խաչիկեանին եւ Ս. Հմայակեանին նախնական նիւթի հետ ծանօթանալու եւ արժէքաւոր դիտողութիւնների համար:

4 Իմաստային նշումը բերւում է ըստ Մելիքիշուիլու (Меликишвили, 1954: 36):

5 Ս. Հմայակեանը փորձում է կապել Մեղրեցու բառարանում արձանագրուած մեղարդ «զուսին» բառի հետ: Սակայն Մեղրեցու բառարանի վրայ հենուելը, այլուր այդ բառը բացակայելու պայմաններում այնքան էլ վստահելի չէ, քանի որ նշուած բառարանը ամենաաղաւաղուած եւ սխալաշատ բառարանն է, թերեւս, հայ բառարանագրութեան ողջ շտեմարանում (տե՛ս Հ. Ամալեան, Բառգիրք Հայոց, Երեւան, 1975, էջ Է-ԺԳ): Ըստ երեւոյթին, ճիշտ է նկատել Ղափանցեանը, որ Ս եւ Մ տառերը կարող էին շփոթուել, եւ դժուար է անգամ ասել, արդեօք մեղարդ բառ եղել է, թէ ոչ:

6 Այս երկիրը պէտք է նոյնացնել հիւսիսային այն Խորձեանի հետ (յուն. Χορζηνηνή), որ Ստրաբոնը բնորոշում է որպէս Հայաստանի ամենահիւսիսային եւ ձիւնառատ մարզերից մէկը (Страбон, IX, 14, 4) իսկ Ultuza-ն (-za-ն ցեղատեղանուանակերտ ածանց է) տեղադրել Օլթու-չայի աւազանում՝ միջնադարեան հայկական Ուղթիք/Ուխթիք-ի տեղում: Նշենք, որ Երեմեանը կամայականօրէն նոյնացնում է *Արտազ* գաւառանուան հետ, մի բան, որ անհնար է հնչիւնական անցումներով բացատրել (Երեմեան, 1963, 40):

7 Բոլորովին անտեղի են թւում Դեակոնովի կողմից Ere (ցեղանուն) + ebani «երկիր» կաղապար վերականգնելը (I. Diakonoff, S. Kashkai, 1981; 29), այլեւ հ.-ե. հենքի վրայ՝ Ռ. Իշխանեանի կողմից «երեւելի, երեւացող» (Ռ. Իշխանեան, 1987, 71), Ց. Կարագեոզեանի կողմից՝ «երջանիկ քաղաք» մեկնութիւնները (Կարագեոզեան, 1998, 80-81):

THE STRUCTURE OF URARTIAN PANTHEON [SUP]

Armen Musheghian

The article examines the structure of Urartian pantheon from several points of view. For the first time we try to group the theonyms according to their linguistic nature. Besides that, the deity names are rendered through functional characteristics, as well as, geographical locations appropriately.

The linguistic classification is carried out by means of distinction of suffixal and other formants, in result of which, the names of Hurrian-Urartian *[-â, -(i)ne, -de, -ar-de, -re, - di-ne]*, Hittite *[ša, šini/e]*, Proto-Hittite [-ela, conf. Hittite -ili] and Semitic *[-ta, -tu]* origin are determined. Along with the derivatives, some radical names are occurred [Uâ, Arde, Arne, Aue], as well as, compounds [Teǰ-šeba, At-bine etc.], including the *Zuzumaru* reduplication. Among the compounds, especially the Hittite and Proto-Hittite deity names with -šepa [Urart. *-šeba*], *-pinu/-puna* [Urart. –bine/-bune] components are distinguished. The latter, in particular, is realized in the reconstructed theonym -*Ï/Er(e)bune.

ՀԱԿԱՐԻԻ ՎԵՐՆԱՀՈՎՏԻ ՆՈՐԱՑԱԾՏ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Ալեքսան Յակոբեան

Հակարի գետի վերին աւազանը, որը կազմուած է Շալուայ, Հոչանց եւ Աղաւնոյ վտակների հովիտներից, հնում համապատասխանում էր Սիւնիք նահանգի Աղահէճք եւ Արցախ նահանգի Վայկունիք եւ Բերձոր գաւառների տարածքին:

Ղեւոնդ Ալիշանից, Սուրէն Երեմեանից ու նրանց հետեւորդներից պատմագրութեան մէջ արմատաւորուել է այն սխալ պատկերացումը, ըստ որի՝ նշուած ամբողջ շրջանը, արեւելքում մինչեւ Արցախեան լեռնաշղթան, մաս է կազմել Աղահէճք (հետագայում՝ Քաշաթաղ) գաւառին: Սակայն Ստեփաննոս Օրբէլեանի «Սիւնեաց պատմութիւնը», Մովսէս Դասխուրանցու (կոչուած նաեւ Կաղանկատուացի) «Աղուանից պատմութիւնը», Տաթեւի արքեպիսկոպոսանիստի հարկատու գիւղերի ցանկերը, Ամարասի (հարաւային Արցախի) եպիսկոպոսութեան թեմական սահմանները նշող Գտչավանքի արձանագրութիւնը եւ Սիւնիքում ու Արցախում ստեղծուած այլ սկզբնաղբիւրներ, հստակօրէն արձանագրում են աշխարհացոյցեան եւ հետագայ Սիւնիքի ու Արցախի սահմանը Հակարի գետի ամբողջ երկարութեամբ, հիւսիսում Հոչանցով եւ նրա օժանդակ Գորանիխով: Հարցի խոր քննարկումը թողնելով այլ առիթի, այս ներածութեան մէջ նշենք միայն, որ սիւնիք-արցախեան սահմանը Հակարի-Հոչանցով փոփոխութիւն չի կրել մինչեւ նոր ժամանակները, մինչեւ ԺԹ դարում ռուսական կայսրութեան Ելիզաւետպոլի նահանգի Զանգեզուրի գաւառի ստեղծումը, որն արեւելքում արդէն հասնում էր Արցախի լեռնաշղթային:

Այստեղ արձանագրենք նաեւ մեր տարածքի երեք գաւառների հարաւային սահմանագծերը: Աղահէճքի սահմանը Հաբանդ գաւառի հետ անցնում էր Աղաւնոյ (Ծիծեռնավանուց) գետի եւ նրա խրով վտակի (Արաւուսի գետակ) ջրբաժան սարահարթի գծով: Վայկունիքի սահմանը Բերձորի հետ անցնում էր, ամենայն հաւանականութեամբ, Եաղինի ձորակով (Թղիկ եւ Զերթի գիւղերի միջեւ): Բերձորի հարաւային սահմանը (Սիսական-ի-Կոտակ գաւառի հետ) անցնում էր, ամենայն հաւանականութեամբ, Փոքր Ակերայի ձորակով (Ամուտեղ եւ Թովմասար լեռնագագաթների միջեւ):

Քոչուոր էթնիկական տարրերի ներթափանցումներից երկուս ու կէս դար անց Հակարիի վերնագաւառը վերստին լիովին հայաշունչ է, եւ այդ վերածնունդի պտուղներից մէկն էլ նորագոյն ժամանակների գիտութեանն անյայտ յուշարձանների անընդհատ յայտնաբերումն է հայ բնակչութեան կողմից: Ստորեւ ներկայացուող վիմագրերը այդպիսի վերջին յայտնագործութիւնների արդիւնքն են:

1. ԱՂԲԱԹԽԷՐՏ

Աղբաթխէրտի գիւղատեղին գտնուում է Աղաւնոյ վտակի (Ծիծեռնավանուց գետ, Աղօղլան, Զաբուխչայ) վերնահովտում, Իշխանասարի հիւսիսային լանջերի հորդաբուխ աղբիւրներից ձեւաւորուող եւ շուրջ 10կմ զուգահեռ հոսող երկու օժանդակների միջեւ հարաւից հիւսիս ձգուող սարահարթի վերջին մասում, Աղաւնոյի ափից 2 կմ հարաւ-արեւմուտք,

© National Library of Armenia

Հակ գիւղից (ԺԹ-Ի դդ.՝ Մինքենդ) Իշխանասարի աղբիւրները գնացող դաշտային ճանապարհով 4 կմ հարաւ, ծովի մակերեւոյթից 1650մ բարձրութեան վրայ: ԺԹ դարի քարտէզներում այդ տեղում նշուած է Ալպատխիր, Աղվատխեր, Ալբաղխիռ (վրիպակով՝ Адбадхиръ) բնակավայրը եկեղեցու նշանով[1]: Իսկ ներկայումս սարահարթի մէջտեղում հինաւուրց շինութիւնների աւերակների ուրուագծերի մէջ բարձրանում է 1989-92թթ. «Իշխանասար - Լաչին քաղաք» ջրագիծը կառուցող աղրբեջանցի շինարարների կողմից հսկայ կոյտի մէջ հաւաքուած տապանաքարերի, խաչքարերի ու եկեղեցու անկիւնաքարերի մի բլուր:

Մեզ յայտնի չէ գիւղատեղիի որեւէ ուսումնասիրութիւն հայ կամ օտարազգի մասնագէտների կողմից[2]: Այն փաստօրէն յայնաբերուել է Քաշաթաղի շրջանի ջրաշինարարների պատահական այցելութեան ընթացքում (Միշա Ժամկոչեան եւ ուրիշներ) եւ հետազօտուել մեր կողմից 1999 թ. հոկտեմբերին շրջակայ գիւղացիների մասնակցութեամբ: Նախնական տպաւորութեամբ՝ գիւղատեղիի դիրքը եւ առկայ քարակոթողների մշակման որակը յուշում են, որ մեր առջեւ գոնէ միջնադարում բարձր կարգավիճակ ունեցած բնակավայրի աւերակներ են, որի վերջնական որակները կարող են ճշտուել հնագիտական պեղումներով:

Հնավայրի երեւացող քարակոթողներից համառօտ տապանագրեր ունեն երեք գերեզմանաքար, եւ ընդարձակ, 4 տողից բաղկացած արձանագրութիւն ունի մեծ չափերով մի ամբողջական խաչքար:

Տապանաքարերից երկուսը ուղղանկիւն են, մէկը՝ օրորոցաձեւ: Ուղղանկիւն, իրար նման, մեծ չափերի (220×90×20 սմ) տապանաքարերի երեսին, երկգիծ մարդակերպ շրջանակի մէջ մէկական տողով փորագրուած են համառօտ տապանագրեր.

ԱՅՍ Է ՀԱՅՆԳԻՍՏ ՄՍՐԻԿԱ (կամ ՅՐԻԿԱ, ընդ որում Յ-ն՝ բոլորգրով):

ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Է ԼՐՈՅ:

Առաջինում կցագիր են Ս-է եւ Ա-Յ-ն տառերը: Վերջին բառի Ս-ի ձախ ստեղնն սկսուած է կէսից, հաւանաբար նախորդ Մ-ին միախառնուելուց խուսափելու նպատակով: Տ-ն գրուած է Օ-ի նման կլորակով: Կամ, եթէ այդ կլորակը զարդանախշ է, իսկ Մ-ն՝ Տ, ապա անունը պէտք է կարդալ ՅՐԻԿԱ: Երկրորդ տապանագրի մէջ կասկածելի տեղեր չկան, բացառութեամբ այն հանգամանքի, որ Լրոյ (Լո՞ւր, Լա՞ր, Լի՞ր) կամ Էլրոյ անուան այլ յիշատակութիւն մեզ յայտնի չէ: Նոյն կերպ որեւէ աղբիւրում չունենք նաեւ Յրիկա անուն: Փոխարէնը՝ Մսրիկը ուշ միջնադարում տարածուած իգական անուն է, որի մասին հանգամանալից կը խօսենք ստորեւ:

Օրորոցաձեւ տապանաքարը, որը խնամքով զարդանախշուած է վարդեակներով, խաչերով ու մարդաքանդակներով, երկաստիճան է եւ երկլանջ վերնամասով: Վերջինիս հարաւային նիստին եղել է երկտող արձանագրութիւն, որից հողմնահարութեան պատճառով ընթերցւում են միայն առաջին տառերը, ԱՅՍ Է Հ...: Դրանց չափերից երեւում է, որ իւրաքանչիւր տողում եղել է 12-15 տառ:

Քառատող վիմագիրը կրող խաչքարը (չափերը 190×90×20 սմ) պահպանուել է չնչին ջարդուածքներով եւ օրորոցաձեւ տապանաքարի նման զարդանախշուած է բարձրարուեստ յավերժութեան նշաններով, խաչերով եւ վեցանկիւններով լցուած վարդեակներով: Արձանագրութեան առաջին տողը փորագրուած է

խաչքարի քիւին, իսկ մնացած երեքը՝ մինչեւ մեծ խաչի շրջանակը հասնող, դէպի ներս փոքր կլորութիւն ունեցող քիւատակի վրայ: Քարի երեսի աջ վերին անկեան ջարդուածքի պատճառով բացակայում է առաջին տողի առաջին տառը (հաւանաբար՝ Զ) եւ երկրորդ տողի առաջին տառի վերեւի կէսը (հաւանաբար՝ Ե): Թուականն առնուած է կրկնակէտերի մէջ, պատուոյ եւ այլ նշաններ չկան: Գրչանկարը հետեւեալն է.

ԳՆՈՍՇ ԵՅԷՔ:ԹՎՊԿԲ:
ԱՂԲԹԽԷՐՍՏՇԱՏԽԷՐՍ
ԿԿՆԵՅԻՋԽԱՋ ՍՀՕՔՆ
ԱՐՆՇՐՈԲԷՇՔԵՆՄՍՐԻԿԱ

Մեր ընթերցումն է.

[Զ]ԳԻՆՈՍ (Յ)ԻՇԵՅԷՔ: ԹՎ(ԻՆ) ՊԿԲ: (1413 թ.):

ԵՍ՝ ԱՂԲ(Ա)ԹԽԷՐՏՈՒ ՇԱՏԽԷՐՍ,

Կ(Ա)ԿՆԵՅԻ ԶԽԱՋՍ ՀՕՔ(ՈՅ)Ն

ՄԱՒՐՆ ՄԵՐՈ(Յ) ԲԷՇՔԵՆԱ(Յ)

ՄՍՐԻԿԱ(Յ):

Ըստ այսմ, կցագրուած են.

Առաջին տողում. առաջին բառի Գ-ն ու Ի-ն; առաջին եւ երկրորդ բառերի կից Ս-ն ու Ի-ն:

Երկրորդ տողում. առաջին եւ երկրորդ բառերի կից Ս-ն ու Ա-ն; երկրորդ բառի Տ-ն ու Ո-ն; երրորդ բառի Ա-ն ու Տ-ն եւ Է-ն ու Ր-ն:

Չորրորդ տողում. առաջին բառի ԵՔԵՔ տառերը՝ Մ-Ա-Ի; առաջին եւ երկրորդ բառերի կից Ն-Մ-Ե տառերը; երրորդ եւ չորրորդ բառերի կից Ն-Ա-Մ տառերը:

Անհրաժեշտ է վերապահում անել, որ կցագրման երկու դէպքերում ստացուել է մէկական տառ (Գ-Ինոս, ԵՍ-Աղբաթխէրտու), որն, իհարկէ, ստիպում է հնարաւոր համարել ապագայ ուսումնասիրողների գուցէեւ այլ վերծանութիւններ: Թէպէտ, ԳԻՆՈՍ-ի Գ-ի աջ ելուստն աւելի նման է առկայ Ի-երի ելուստներին, քան Ե,Է,Ի,Բ տառերի հորիզոնական գծիկներին: Իսկ ԵՍ դերանուան եւ Ա-ով սկսուող յաջորդ բառի կից տառերի կցագրման օրինակներ կարելի է գտնել այլուր[3]:

Երեւում է, որ փորագրողը (կամ բնագիր կազմողը՞) սղման է ենթարկել միայն ձայնաւորները (Աղբաթխէրտու, կակնեցի, հօքոյն) եւ կիսաձայն Յ-ն (Յիշեցէք, հօքոյն, մերոյ, Բէշքենայ, Մսրիկայ): Միեւնոյն տառի տարբեր գրելաձեւ ունենք Յ-ի դէպքում. ԻՇԵՅԷՔ-ում այն բոլորգիր է, իսկ ԿԿՆԵՅԻ-ում՝ երկաթագիր: ԱՂԲԱԹԽԷՐՏ-ի Տ-ի վերջին ատեղնն իջնում է մինչեւ տողը՝ Ո-ի հետ կցագրելու արդիւնքում, իսկ ՇԱՏԽԷՐ բառի մէջ նոյն ստեղնն աւարտւում է վերին կէսով՝ ըստ երեւոյթին, կցագրուած Ա-ի հորիզոնական ելուստին չմիախառնուելու համար: Ուշագրաւ է ՀՕՔՈՅՆ բառի մէջ Օ-ի օգտագործումը (ուշ միջնադարեան Սիւնիքում տարածուած գրելաձեւ)[4] եւ, միաժամանակ, ՄԱՒՐՆ բառի մէջ ԱՒ-ի պահպանումը:

Արձանագրութեան ճշգրիտ բնագիրը վերականգնւում է մի անխուսափելի դիտարկման շնորհիւ: Եթէ բնագրի ընթերցումն սկսում ենք քիւի տողից, ապա ստացւում է, որ առաջինն իրեն յիշատակում է ոմն Գինոս (որը, պարզ է՝ փորագրողն է), որից յետոյ միայն գրւում է պատուիրատուի մասը. «Ես՝ Աղբաթխէրտու Շատխէրս, կակնեցի զխաչս...»: Նման յերթականութիւն երբեմն հանդիպում է ձեռագրերի յիշատակարաններում, բայց վիմագրերի բազմահազար

© National Library of Armenia

նմուշներից մեզ չի հանդիպել եւ ոչ մէկում: Բոլոր այն փորագրիչները, ովքեր երբեմն իրենց թոյլ են տուել սեփական անունը յիշատակել պատուիրատուի անուան կողքին (եւ այդպիսի կանոնազանցումների շնորհիւ մենք, բարեբախտաբար, ունենք հին հայ վարպետների թանկագին անուններ[5]), արել են դա բնագրի վերջում[6]: Սակայն կարծում ենք, որ այս դէպքում էլ գործ ունենք սովորական յերթեւեկանութեան հետ: Այսինքն՝ արձանագրութիւնն սկսել է գրուել քիւատակից (այսօրուայ երկրորդ տողից)՝ «Ես՝ Աղբաթխէրտու Շատխէրս...»: Երեք տող անց փորագրողը հասել է մեծ խաչի շրջանակին եւ վճռել թուականը գրել վերեւում, քիւի վրա, թուականից առաջ տեղ գտնելով նաեւ իր անուան յիշատակութեան համար: Այդպէս առաջացել է այսօրուայ առաջին, իսկ իրականում վերջին տողը. «զԳինոս յիշեցէք. թվին ՊԿԲ»:

Սովորական չէ նաեւ Շատխէր Աղբաթխէրտցու մօր անունը (ի դէպ, աւելի սպասելի էր «մաւրն իմոյ», ոչ թէ «մաւրն մերոյ» գրելը)՝ Բէշքեն-Մարիկ: Զարգացած եւ ուշ միջնադարում Մարիկը (նաեւ Մարի, Մարիխաթուն, Մարիշահ) տարածուած իգական անձնանուն է[7], սակայն Բէշքենը (Բեժքեն, Պեշգինէ) արական է[8]: Իհարկէ, կարելի է խորանալ մեր խաչքարի բնագրում աղաւաղումներ ենթադրելու մէջ, օրինակ՝ «մաւրն (եւ հօրն) մերոյ՝ Բէշքենայ (եւ) Մարիկայ»: Բայց աւելի պարզ մօտեցման դէպքում անհրաժեշտ է տեսնել իգական Բէշքեն-Մարիկ երկտարր անձնանուան առաջին օգտագործում, ինչպէս նաեւ՝ ենթադրել, որ մարիկ բառը օգտագործուել է տիրուհի նշանակութեամբ (ինչպէս՝ տիկին, խաթուն, խան, խանում, շահ եւ այլն):

Խաչքարի եւ, հաւանաբար, զարդանախշերով նոյնանման օրորոցաձեւ տապանաքարի հեղինակ Գինոսի արական անձնանունը բազմիցս օգտագործուած է միջնադարում[9]: Հր. Աճառեանի հաւաքած օրինակներին կարելի է աւելացնել եւս մէկը. Գինոս է եղել Քաշաթաղի իշխան Մէլիք Հայկազի (ԺԶ-ԺԷ դդ.) եղբօր անունը[10]:

Շատխէր անձնանուան այլ օգտագործման օրինակ մեզ յայտնի չէ: Փոխարէնն ունենք շատ բաղադրիչով կազմուած բազմաթիւ այլ անուններ. Շատաղէկ (ԺԳ դ.), Շատարեւ (8 դէպք, ԺԵ-ԺԷ դդ.), Շատեմայր (ԺԵ դ.), Շատոյոյս (3 դէպք, ԺԳ-ԺԵ դդ.)[11]: Հր. Աճառեանի հաւաքած օրինակներին աւելանում է Սամուէլ Կարապետեանի կողմից 1987թ. Տրտուի ձորում յայտնաբերուած Դաղիվանքին մերձակայ Ս. Աստուածածնի վանքում արձանագրութիւն թողած նուիրատու Շատբարին (ԺԲ կամ ԺԳ դ.)[12]:

Աղահէճք-Քաշաթաղ գաւառի Աղբաթխէրտ գիւղանուան յիշատակութիւնը ԺԵ դարի սկզբի խաչքարի վրայ թոյլ է տալիս կատարել մի կարեւոր պատմա-աշխարհագրական դիտարկում: Ինչպէս յայտնի է, Ստեփաննոս Օրբէլեանի «Պատմութիւն Սիւնեաց» («Պատմութիւն նահանգին Սիսական») երկասիրութեան[13] վերջում տրուած Տաթեւի արքեպիսկոպոսանիստին հարկատու գիւղերի ցանկում Աղահէճքին յաջորդող Հաբանդ (Համբանդ) գաւառի գիւղացանկն սկսւում է Աղախիրտ (տարբ. Աղախերդ) տեղանունով: Վերջինիս նմանութիւնը մեր Աղբաթխէրտին թոյլ է տալիս ենթադրել, որ իրականում Տաթեւի պտղացուցակի բնագրում Աղ(բ)ա(թ)խէրտը եղել է Աղահէճքի վերջին գիւղը եւ ինչ-որ ձեռագրական աղաւաղման արդիւնքում Ստեփաննոս Օրբէլեանի կամ նրա սկզբնա-

գիրն ընդօրինակողներից մէկի գրչի տակ այն վերածուել է Հաբանդի ցուցակի առաջին գիւղի:

Այսօր էլ առկայ ձեռագրերի մեծ մասում գիւղացանկերը տրուած են երկու սիւնակով, եւ եթէ ենթադրենք, որ «Համբանդ գաւառ» բառերը գրուած են եղել մայր ձեռագրի սիւնակներից մէկի վրայ (ոչ թէ սիւնակների մէջտեղում), ապա դրա դիմացի սիւնակի բառը, իրականում լինելով նախորդ գաւառի վերջին գիւղը, կարող էր ընկալուել որպէս Հաբանդի առաջինը: Աւելացնենք, որ Հաբանդի գիւղացանկն սկսւում է Աղբաթխէրտից շատ հեռու՝ Խնձորեսկի մերձակայքում (վերջինս 3-րդն է), շարունակւում դեպի Կոռնիձոր (Խորեայ, 7-րդ) եւ Տեղ (11-րդ), անցնում մինչեւ Խանածախ (տարբ. Խոնածախ, 16-րդ), Վաղաթու (տարբ. Վաղատու, 17-րդ)[14] եւ Խորխոր (տարբ. Խորխոռ, 19-րդ)[15], այդտեղից վերադառնում զոյգ Մակաղոցներով (Խնածախ գետակի վերնահովտում) ու Կարբինքներով (Ներկայիս Քարաշէն)[16] դէպի Գորու (Հարթաշէնի մօտ), հասնում Հակարիի ափը (Բազմածակք-Մազմազակ եւ Քրաւնք-Քեօղլար)[17], իջնում մինչեւ Որոտանի գետակի ափերով եւ աւարտւում Շնոյհերք (Շնհեր-Շինուհայր) եւ Հալէ (Հալիձոր) գիւղերով:

«Սիւնեաց պատմութեան» առկայ ձեռագրերում գտնում ենք սպրդած եւս մի ընդօրինակման սխալ: Աղահէճք գաւառի ցանկում յիշատակուող 43 գիւղերից 37-րդը Հայրին է, որը յայտնի է նաեւ այլ աղբիւրներից: Տաթեւի վանքի 1730 թ. պտղացուցակում այն յիշատակւում է Հէրի (տարբ. Հէրէ), իսկ յաջորդ դարի քարտէզներում ու գրականութեան մէջ մինչեւ մեր դարի սկզբները՝ Հէրիկ ձեւով[18]: Գիւղը գտնւում է Աղբաթխէրտի գիւղատեղիից դէպի արեւելք ընկած յաջորդ ձորակում, ԺԹ դ. քարտէզներում նշուած եւ ներկայումս խոտածածկ սայլի ճանապարհով 3-4 կմ հեռաւորութեան վրայ: Աղահէճքի գիւղացանկում Հայրիից յետոյ գտնում ենք եւս վեց գիւղանուն (38-43-րդ)՝ Անոշաւան (տարբ. Անուշաւան), Աղտաւ (տարբ. Աղտատ), Շամրթա, Արքո, Վասակերտ (տարբ. Վասակակերտ) եւ Աւարակ (տարբ. Ասորոկ): Սակայն հետաքրքիր է, որ նոյն անունները չնչին տարբերութիւններով[19] եւ նոյն հարկաչափերով յիշատակւում են նաեւ Ճահուկ գաւառի գիւղացանկի վերջում. Անուշաւան (տարբ. Անուշավանք), Աղտաւ (տարբ. Աղդաւ), Շոմրթայի (տարբ. Շմրթայի), Արքոյքա, Վասակերտ (տարբ. Վասակակերտ), Աւերակի[20]: Հասկանալի է, որ երկու հատուածներից մէկում գիւղանունները յայտնուել են ընդօրինակողի ինչ-որ սխալի արդիւնքում: Այս անուններից մի քանիսը որոշակի հաւանականութեամբ համադրւում են Նախիջեւանի Ճահուկ-Շահապոնք գաւառի գիւղերի հետ[21], միեւնոյն ժամանակ՝ Աղահէճք-Քաշաթաղում որեւէ համադրութիւն չի նկատւում: Դրանից բխում է, որ կարող ենք ուղղել ձեռագրական սխալը եւ Աղահէճքի գիւղացանկը համարել աւարտուած Հայրի-Հէրիկով: Իսկ վերջինս, ինչպէս ասացինք, հեռու է Աղբաթխէրտից (իրականում Աղահէճքի վերջին, իսկ գրիչներից մէկի սխալի արդիւնքում՝ Հաբանդի առաջին գիւղից) 3-4 կմ կամ ընդամէնը մէկ ձորակ[22]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Աղահէճքի գիւղացուցակը, սկսուելով Աղաւնոյի ձախ ափին Հակ (Մինքենդ)

© National Library of Armenia

գիւղին արեւելքից հարեւան բնակավայրերից (Հակը 6 կամ 5-րդն է), պտտւում է դէպի հիւսիս մինչեւ Ականք-Սպիտակջուր[23] (Աղբուլաղ)՝ 9-րդ, շարունակւում դէպի հարաւ-արեւելք Հոչանց գետի աջ ափով (Արուական-Ալխասլու՝ 10-րդ, Մշենի-Միշնի՝ 11-րդ, Ջիւնասար[24]-Սոնասար՝ 14-րդ, Հունչաւք[25]-Հոչազ՝ 17-րդ, Մարգք-Մարքիզ՝ 18-րդ), հասնում մինչեւ Աղաւնոյի գետախառնուրդը (Ագարակուգետ 22-րդ), թեքւում նրա աջ ափով դէպի վեր (Շաբակի[26]-Զաբուխ՝ 23-րդ, Արահուծ (Արըգլար-Մաղիբեյ)՝ 28-րդ, Ծիծառնովանք (տարբ. Ծիծառնուվանք)՝ 29-րդ, Հայելեակ-Հալաքս-Հաջիլար[27]՝ 30-րդ) եւ աւարտւում Աղաւնոյի վերնահովտում Հայրիով (37-րդ) ու Աղբաթխէրտով՝ Հակի դիմացի ափին:

Ընդմիջարկելով հիմնական շարադրանքը, այստեղ կուզէինք նշել, որ Ստեփաննոս Օրբէլեանի գիւղացանկերի մանրակրկիտ վերլուծութիւնը հանգեցրել է մեզ գիւղերի յերթականութեան մասին մի դիտարկման, որը կարող է օգտակար լինել նաեւ միջնադարեան ուրիշ գիւղացանկերի ստեղծման տրամաբանութիւնը բացայայտելու համար: «Սիւնեաց պատմութեան» ցանկերում գիւղերը դասաւորուած են ո՛չ աշխարհագրական, ո՛չ այբբենական, ո՛չ էլ մեծից-փոքր յերթականութեամբ, սակայն՝ մի ոլորապտոյտ գծով, որը համընկնում է տուեալ գաւառի հին ճանապարհների ուղղութիւններին (բացառութիւն են կազմում Սոթքն ու Ճահուկը, որոնց ցանկերն սկսւում են գաւառի կենտրոններից): Կարծում ենք, որ այդ գիծը պարզապէս եղել է այն «հարկային» երթուղին, որով տարին մէկ անգամ անցել է հարկահաւաքն իր սայլերով՝ հաւաքելով գիւղերի «պտուղը», որը վերջում հասցրել է Տաթեւ: Հաւանաբար, ժամանակի ընթացքում այդ հարկային «գրաֆիկը» մշակուել է այն աստիճան, որ դարձել է հաստատուն թէ՛ հարկահաւաքի, թէ՛ գիւղերի, թէ՛ վանքի համար: Այդ պահին այն վերածուել է գրաւոր փաստաթղթի, պահուել Տաթեւում եւ Ստեփաննոս Օրբէլեանի շնորհիւ հասել մեզ՝ իբրեւ մի անգնահատելի սկզբնաղբիւր:

Աւարտելով Աղբաթխէրտ տեղանուան քննութիւնը, ասենք, որ նրա ստուգաբանութիւնը, հաւանաբար, անակնկալներ կը պարգեւի ապագայ ուսումնասիրող լեզուաբանին: Կարծում ենք, որ առաջին բաղադրիչը կարող է քննարկուել Աղբաթանք (Ռշտունիքում), Հաղպատ (տարբ. Հաղբաթ, Տաշիրում), Աղբակ (Վասպուրականում եւ Կորճայքում), Աղբանու-խեռալ (Տայքում) տեղանունների ստուգաբանութեան ենթատեքստում[28]: Երկրորդ բաղադրիչը կարող է համադրուել հնդեւրոպական *g[h](e)rd[h] հիմքից առաջացած խեթերէն gurta (ամրոց), հին հնդկերէն *gṛdha (ապրելու տեղ, տուն), ալբաներէն gardh (ցանկապատուած տարածք), հին սլաւոներէն gradu (ամրոց, քաղաք, այգի) բառերի հետ[29], չբացառելով կապը նաեւ իրանական kert-gird (արած, շինած, կերտուածք) բառերի հետ[30]:

2. ՄԻՐԻԿ

Ուշ միջնադարի աղբիւրներում յիշատակուող եւ այսօր վերստին հայաշունչ Միրիկը գտնւում է Աղաւնոյի աջ, նոյն Միրիկ անունով յայտնի վտակի ձորակում, Հէրիկից 4կմ դէպի արեւելք: Գիւղի հիւսիսային ծայրին կանգուն է 1682 թ. շինարարական արձանագրութիւն կրող Ս. Աստուածածին եռանաւ բազիլիկ ոճի եկեղեցին, որի պատերի մէջ ագուցուած են նաեւ աւելի վաղ շրջանի անարձանագիր քարակոթողներ:

Տաճարի եւ շրջակայ քարերի վրայ պահպանուել են հինգ վիմագրեր, որոնք ընթերցուել են Ս. Բարխուդարեանի եւ Ս. Կարապետեանի կողմից[31]: Վերջինս մեծապէս ուղղել է յայտնի պատճառներով յապճէպ աշխատած Ս. Բարխուդարեանի վերծանութիւնների սխալները: Մասնաւորապէս կարեւոր է մեծ շինարարական արձանագրութեան մէջ գլխաւոր պատուիրատու Պարոն Հախնազարի անուան ճիշտ վերծանումը՝ Ս. Բարխուդարեանի «Պարոն Համինազար» սխալ ընթերցման փոխարէն: Սակայն Ս. Կարապետեանն էլ սխալուել է նոյն բնագրի 4-րդ (5-րդ) տողի կարեւոր հատուածն ընթերցելիս, որի արդիւնքում վերծանութեան մէջ անսպասելիօրէն յայտնուել է հեռաւոր Մարկիս գիւղը (Մարկի(ս)այ)[32]:

1999 թ. նոյեմբերին մեր կողմից արձանագրութեան մօտիկից հետազօտութիւնը (միրիկցիների եւ Ցարութիւն Արմենեանի մասնակցութեամբ) թոյլ տուեց ճշգրիտ վերծանել կրաստաղի բարակ շերտի տակ հեռուից երբեմն այլ տպաւորութիւն թողնող տառերը:

Մեզ հետաքրքրող 4-րդ տողն ունի հետեւեալ պատկերը.

ԻՆՁԵԻԾՆՂՅՆ:ՄԵՆՔԻՐԿԻԺՁՎՐԴՍՏՌՆՔՍԲԵԿՂՅՈՅՍ

Գրչանկարից պարզ երեւում է, որ վերջակէտից յետոյ ունենք.

ՄԵՆՔ՝ ՄԻՐ(Ի)ԿԻ Ժ(Ո)Ղ(Ո)Վ(ՈՒ)ՐԴՍ,
ՏՈՒ(Ի)ՆՔ Ս(ՈՒՐ)Բ ԵԿ(Ե)Ղ(Ե)ՑՈՑՍ...

Մնացածը ճիշտ է. «Ե [5] Թ(ՈՒ)Մ(Ա)Ն՝ ՅԻԾ(Ա)Տ(Ա)Կ ՄԵՋ ԵՒ ՄԵՐ ԾՆ(Ո)Ղ(Ա)ՑՆ: Ի ԹՎԻՆ :ՌՃԼ: ՄԷԿՆ:»:

Կցագիր են ՄԵՆՔ բառի վերջին եւ ՄԻՐԻԿ բառի առաջին երկու տառերը՝ Ք-Մ-Ի, ինչպէս նաեւ ՏՈՒԻՆՔ բառի Ո-Ի-Ի տառերը: Սղուած են սովորական ձայնաւորներ, այդ թվում, գուցէ, ՄԻՐ(Ի)Կ բառի երկրորդ Ի-ն:

Այսպիսով, բնագրում որպէս Ս. Աստուածածին եկեղեցու երրորդ պատուիրատու, Պարոն Հախնազարից ու ՆՕԱՐԳ տանուտէրից յետոյ յիշատակւում է Միրիկ գիւղի ժողովուրդը, որն այդ գործի համար հաւաքել էր 5 թուման: Իհարկէ, մեզ համար ամենից կարեւորը Աղահէճք-Քաշաթաղ գաւառի եւս մէկ գիւղանուան յիշատակութիւնն է վիմագիր սկզբնաղբիւրում[33]: Նման օրինակներ ունենք ընդամենը եւս երկուսը՝ Աղբաթխէրտի քննարկուած արձանագրութիւնը եւ Հակ գիւղի 1675 թ. կառուցուած եռանաւ բազիլիկ տիպի, այսօր էլ կանգուն եկեղեցու հարաւային միակ մուտքի բարաւորի եռատող արձանագրութիւնը. «ԾԻՆԵՑԱՒ Ս(ՈՒՐ)Բ ԵԿԵՂԵՑԻՍ ՆՈՐԱԿ//ՆՈՒՆՔ ՀԱԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ: // ԹՎ(ԻՆ) ՌՃԻԴ (1675 թ.)»[34]: Վերապահութիւն անենք, որ խնածախ գիւղում Մէլիք Հայկազ իշխանի երկրորդ կնոջ՝ Գուլաբիխանի տապանաքարի հարաւային ճակատին պահպանուած արձանագրութեան մէջ յիշատակւում են Հ(Ա)Ն(Ա)Ծ(Ա)Խ, Պ(Ա)ՑԻՆԴ(ՈՒ)Ր եւ Խ(Ա)ԶՆ(Ա)Վ(Ա)Ր գիւղանունները[35], որոնք Ստեփաննոս Օրբէլեանի ժամանակներում մտնում էին Հաբանդ գաւառի մէջ, իսկ 1730 թ. պտղացուցակում՝ Քաշաթաղի[36]:

3. ԾԻԾԵՌՆԱՎԱՆՔ

Աղահէճք-Քաշաթաղ գաւառի ամենից նշանաւոր այս ուխտատեղին 1998-2000 թթ. ենթարկուեց հիմնաւոր հնագիտական

© National Library of Armenia

պեղումների եւ պատմա-ճարտարապետական հետազօտութեան Հայկական յուշարձանների համահաւաքի խմբագրութեան արշաւախմբի կողմից (ղեկաւար՝ Ցակոբ Սիմոնեան): Նախորդ ուսումնասիրողների դիտարկումները[37] ճշգրտող, էապէս լրացնող ու ամփոփող աշխատանքը շուտով կը հրատարակուի[38]:

Նոյն խմբի կողմից մշակուած նախագծով, Քերոլայն եւ Ջորջ Նաճարեանների ֆինանսաւորումով քաշաթաղցի եկեղեցաշինարարները 2000 թ. սկսել են Միածեռնավանքի Դ դարի եռանաւ բազիլիկ տաճարի վերականգնման աշխատանքները (ղեկավար՝ Գէորգի Առաքելեան): Դրա շնորհիւ հնարաւոր է դարձել եկեղեցու բարձրադիր պատերի վրայ գտնուող եւ ներքեւից դժուարընթեռնելի վիմագրերի մօտիկից ուսումնասիրումը, որն իրերի բերումով առաջինը կատարուեց մեր կողմից 2000 թ. մայիսին: Առանց դժուարութեան ընթերցուեցին հարաւային պատի երեք լուսամուտների կողերի ուշմիջնադարեան արձանագրութիւնները, մի նորայայտ վիմագիր հարաւային պատին, ինչպէս նաեւ հիւսիսային սիւնաշարի արեւելեան կրկնակամարի վրայի՝ յուշարձանի ամենահին վիմագիրը:

Հարաւային պատի՝ արեւմուտքից առաջին լուսամուտի արեւմտեան կողին վերեւից ներքեւ խաչերով ընդմիջուած ընթերցւում են հետեւեալ փոքր վիմագրերը.

ՊԷԳԻՍՈՒ//Լ(Թ)//ԱՆ:
ՄԱՐ//ՈՒՆ:
ԵՂԻՇ//ԱՑ ԻՐ//ԻՑԻՆ:
ՍԻՄ//ՈՒՆ:

Նոյն լուսամուտի արեւելեան կողին, ներքեւում.

ԹԶ(Ս) ՊԷԿԻՆՍՈՒԼԹԱՆ//ԻՆ:

Արեւմուտքից երկրորդ լուսամուտի արեւելեան կողին, երեք քարերի վրայ, ներքեւից վերեւ, խաչերով ընդմիջուած ընթերցւում են.

Ս(ՈՒՐ)Բ Խ(Ա)ՉՍ Բ//ԱՐԻԽԱԻՍ // ՍԱՐԱՒ(Ի)Ն՝ // ՄԱՑՐՆ // ՊԱՐՈՒՆ // ՀԷԳԱ//ԶԻՆ: // ԹՎ // ՌԾ//Թ (1610թ.):

ՍԱՒ//ԱՐԻՆ:
ՊԷԳԻ//ԽԱՆ:
ՈՀԱՆ//ԻՆ:
ՈԼՀ (...)ՈԼԻԼԹ(°):
ԽԸԴՑ//ՄԻՐԻՆ:
ԽԱԹՈՒՆ//ԻՆ:
ԼՍԻՐ//ՊԷԼ//ԻՆ (°):

Նոյն լուսամուտի դիմացի՝ արեւմտեան կողին, վերեւից ներքեւ.

ԳՈՒ//ԼԽԱՍ//Ն:
ԹԱՍ//ԱԼՆ:
ՀԷՐԳ:
ԽԱԹ//ՈՒՆԻՆ:
ՍԱՒ//ԱՐԻՆ:

Վերջին երկուսից ներքեւ արաբատառ փոքրիկ արձանագրութիւն կայ, որը հասկանում ենք. «Ցանուն Ալլահի»:

Արեւմուտքից երրորդ լուսամուտի արեւելեան կողին.

Ս(ՈՒՐ)Բ ԽԱՉ(Ս) Բ(Ա)ՐԷԽ(ԱՒ)Ս Տ(Է)Ր ՈՀԱՆ//ԷՍԻՆ: Պ(Ե)ՏՐՈՍԻՆ:

Նոյն լուսամուտի արեւմտեան կողին, վերեւից ներքեւ.

ՑՈՀ(Ա)Ն//ԻՆ:
ՄԱՐ//ՈՒՆ:
ԱՂ(Ա)ՑՊԷԿՆ:

ՈՒՍՏԱՑ // ՍԱՐՀԱՏԼԻՆ: ՓԱՍՋԷՔ(°)//ԷՍ // ՋԿԸ ԷՐ (1519 թ.):

ՓԻՐԱՋԻՆ ՄԱՒՐՆ//ՆԵՂ ՑԼՆ (°):

Պեղումների շնորհիւ բացուեց նաեւ հարաւային պատի՝ երրորդ, արեւելեան դռան արեւմտեան կողքի հատուածը, որը փակուած էր մոնղոլական տիրապետութեան ժամանակներում հարաւից տաճարի պատին կպցրած կառոյցից մնացած վերջին կոպտաշար պատի մնացորդով[39]:

Բացուած ճակատի բազալտի շարուածքի երկու քարի վրայ կայ քառատող արձանագրութիւն՝ իւրաքանչիւր տողում մէկական բառ: Այդ արձանագրութիւնն է.

ԱՆԱՆԻԱ	ԱՆԱՆԻԱ
ԱԶԱՐԻԱ	ԱԶԱՐԻԱ
ՄԻՍԱ(Ց)ԷԼ	ՄԻՍԱԷԼ
ՍՊԱՍԱՒՈՐ:	ՍՊԱՍԱՒՈՐ

Երկրորդ քարի աջ վերեւի անկիւնում երեւում են երեք տառ՝ Ս եւ տակին՝ ՍՐ: Թւում է, թէ սա գրաւորձ է եղել: Նոյն քարի մէջտեղում բուն արձանագրութիւնն է՝ երկու տողով, մէկական բառով.

ՍՏԵՓԱՆՈՍ	ՍՏԵՓԱՆՈՍ
ՔԱՀԱՆԱ:	ՔԱՀԱՆԱ

Վեց բառերի տառաձեւերը նման են (աւելի փոքր չափի լինելով) այդ դռան միւս՝ արեւելեան կողքին, նոյնպէս երկու քարի վրայ գրուած հնագոյն արձանագրութեան («...զԳրիգոր զանարժան ծառայս...»)[40] տառաձեւերին: Վերջիններս, Ս. Կարապետեանի կարծիքով՝ թուագրւում են ոչ ուշ քան Ժ դարով, իսկ մեր կարծիքով՝ ԺԱ դարով, որի մասին տե՛ս ստորեւ:

Անանիա, Ազարիա, Միսայէլ եւ Գրիգոր Միծեռնավանցիները այլ աղբիւրներից մեզ յայտնի չեն: Ունենք «Ստեփաննոս Միծառնայ վանական», որը Հայոց ՄՂԳ (844) թ., ի թիւս այլոց, ստորագրել է մի կալուածագիր[41]: Նրա նոյնութիւնը նորայայտ վիմագրի «Ստեփաննոս քահանայի» հետ դժուար է ճշտել կամ մերժել:

Մօտիկից հետազօտման շնորհիւ կատարուած ամենից ուշագրաւ գիւտը կրկնակամարի կրնկաքարերի վրայ փորագրուած հնագոյն տառաձեւերով արձանագրութեան ընթերցումն է: Այն գտնւում է եկեղեցու կառուցման սկզբնական երկու փուլերից (Դ-ե դդ.) յետոյ հիւսիսային սիւնաշարի ու պատի ամրացման նպատակով գեղակերտ որմնամոյթերի եւ երկշար կրկնասիւների ու կրկնակամարների աւելացման արդիւնքում առաջացած արեւելքից առաջին կրկնակամարի զոյգ՝ կրկնաքիւին հենուած քարերի վրայ: Ձախ կողմի քարի վրայ չորս տող է երեքական տառերով, աջի վրայ՝ 5 տող՝ 3, 3, 2, 3 եւ 1 տառերով: Նախորդ ուսումնասիրողները ներքեւից կարողացել են կարդալ ձախ քարի բոլոր տառերը (ՏԱՒ//ՈՐՑ//ԻՇԵ//ՑԷՔ) եւ աջ քարի առաջին երկու տողերինը (ԶԳԻ //ՈՐԳ): Անյաջող փորձեր են եղել վերծանելու բնագիրը որպէս «Տաւոր յիշեցէք զ Գրիգոր(ի)գս. յիշեցէք» կամ «(Ուխ)տաւոր յիշեցէք զ Գիորգ ԳՍԻԽՍՏ»[42]:

Մօտիկից հետազօտումը նախ եւ առաջ թոյլ է տալիս պարզաբանել մի շարք որոշիչ հանգամանքներ.

Փոքրիկ ջարդուածքների պատճառով ներքեւից ամենից վատ հասկացուող՝ աջ քարի չորրորդ շարքի առաջին տառը Շ է (երկաթագրից բոլորդրի անցման ոճի), ճիշտ նոյնպիսի, ինչպէս ձախ քարի ՑԻՇԵՑԷՔ-ում:

Նոյն քարի երրորդ եւ չորրորդ տողերի վերջին տառերը Ա են (ըստ այդմ՝ ԳԱ եւ ՇԽԱ), ոչ թէ Ս, ինչպէս ենթադրուել է[43]:

Արձանագրութեան տառերը ներկուած են նոյն բաց կարմիր ներկով (ներքեւից դա չի նկատւում), որով ներկուած են տաճարի կառուցման երկրորդ եւ երրորդ փուլերի մի շարք մանրամասեր (ատամիկների արանքները, օճանախշերը եւ այլն), ընդ որում, պարզ է, որ դա կատարուել է երրորդ փուլի շինարարի կողմից: Սակայն աջ քարի երկու տառ ներ-

© National Library of Armenia

կուած չեն՝ վերջին տողի միակ տառը՝ Տ, եւ երկրորդ տողի վերջին տառը: Դա սովորական երկաթագիր Գ է (միւս երկուսի նման), բայց հորիզոնական գծիկ չունի՝ քարի ծայրին գրուած լինելու պատճառով:

Նշուած հանգամանքները պարզ են դարձնում, թէ ինչ է կատարուել դարեր առաջ: Հեղինակը աջ քարի երկրորդ տողում գրել է Գ (ԶԳԻՈՐԳ բառի վերջին տառը), սակայն չի հաւանել այն (հորիզոնական ելուստը չտեղաւորելու պատճառով) եւ նոյն տառը գրել է յաջորդ տողում: Նոյն կերպ՝ հինգերորդ տողում գրել է Տ, սակայն, տեսնելով, որ հասել է քիւին եւ ստիպուած է լինելու կիսատ թողնել (սղել) բնագիրն ու կիսահասկացուած մնալ սերունդների առջեւ, խոտանել է նաեւ այդ Տ-ն եւ բնագիրը մի նոր Տ-ով շարունակել... ոչ թէ աջ (հին կամարի նեղ կրնկաքարի), այլ ձախ, այսինքն՝ նոր կառուցուած կրկնակամարի հարեւան քարի վրայ (!): Հնարաւոր է, որ հաւանած բնագրի տառերը կարմիր ներկելուց բացի, նա նաեւ սւաղել է խոտանուած Գ-ն եւ Տ-ն, բայց դարեր անց սւաղը թափուել է:



Այսպիսով, ունենք աջ քարի վրայ սկսուած եւ ձախի վրայ աւարտուած հետեւալ պարզագոյն բնագիրը. «ԶԳԻ //ՈՐ//Գ Ա//ԾԽԱ//ՏԱԻ//ՈՐ Ց//ԻԾԵ//ՅԷԺ»:

Եւ արդէն նոյնքան էլ պարզ է, որ իրեն կարող էր այդպիսի բան թոյլ տալ (իր համար յիշատակութիւն խնդրել խորանին ամենից մօտիկ կրկնակամարի՝ Սուրբ Սեղանին ու կենտրոնական նաւի սրահին նայող արձանագրութեամբ եւ իր հղացած բնագրի կէսը տեղաւորել նախորդից ձախ ընկած քարին, խոտանելով դուր չեկած տառերը) ոչ այլ ոք, քան տաճարի կառուցման երրորդ փուլի ճարտարապետը: Աշխատաւոր (որոշ դէպքերում՝ աշխատող) բառը տարբեր շինարարական արձանագրութիւններում հէնց դա էլ նշանակում է. «աշխատանքի, գործի կատարողը»[44]: Եւ քանի որ ակնյայտ է, որ Միծեռնավանքի կառուցման երրորդ փուլը ճարտարապետական արուեստի տեսանկիւնից չի զիջում առաջին երկու փուլերին, ուրեմն յանձին Գիորգի՝ ունենք միջնադարի մի շնորհալի քարգործ-ճարտարապետի («գաղատոսի», ինչպէս Զուարթնոցի հեղինակին կոչում է Մովսէս Դասխուրանցին[45]) թանկագին անունը:

Աղբիւրագիտական պրպտումները թոյլ են տալիս Միծեռնավանքի «Գիորգ աշխատաւորին» համադրել Բղենոյ Նորավանքի կառուցող «Հայր Գիորգ աշխատաւորի» հետ: Ներկայիս Բարձրաւան (ԺԸ-ԺԹ դդ.՝ Իրիցաթումբ) գիւղից 3-4 կմ դէպի արեւելք գտնուող «Բղենոյ գաւառի Նորավանքը» հիմնադրուել է Հայոց ՃՁԵ (936) թ. Հրահատ իշխանի եւ Ստեփաննոս քահանայի կողմից[46]: Սակայն յուշարձանների մեզ հասած խումբը («կենտրոնում փոքրիկ եկեղեցի, որին հարաւից եւ հիւսիսից կցուած են աւելի եւս փոքրիկ սենեակներ եւ այդ բոլորի առաջ արեւմուտքից մի շատ գեղեցիկ սրահ-գաւիթ»)[47] կառուցուել է ԺԱ դարում եւ աւարտուել Հայոց ՇԺԱ (1062)

թ.: Պատմիչն այդ մասին գրում է. «Բայց յետ սակաւուց շինեցաւ եկեղեցին յոյժ գեղեցիկ յօրինուածովք, եւ դրանն կամարք զարմանալիք ի սքանչելի ճարտարաց յարմարեալք մեծամեծ վիմօք եւ խարսխաւոր սեամբք ի հայր Գէորգայ եւ ի Յովհաննիսէ քահանայէ»[48]: Ցիշատակուած անձնաւորութիւնները եկեղեցու պատերին բազմաթիւ վիմագրեր են թողել, որոնցից երկուսի հեղինակը «հայր Գիորգն» է (երեսապատման քարերի վրայ՝ 12 տող եւ 7 տող): Առաւել համառօտ արձանագրութիւնը հետեւեալն է. «ՅՈՏՍ ԱՆԿԵԱԼ ԱՂԱՋԵՄ ԶՁԵԶ, ՍԲ ԵՒ ԱԾ//ԱՀԱՃՈ ԵՂԲԱՐՔ, ՈՐՔ ԱՂԱՒԹԷ//Ք Ի ՍԲՈՑ ԵԿԵՂ(ԵՑ)ՈՑԴ ԵՒ ԱՌԱՋԻ ԱԾԸ//ՆԿԱԼ ՍՐԲՈՑ ՍԵՂԱՆՈՑԴ, ԶԻՄ՝ ԶՏ//ԱՌԱՊԵԱԼՍ ԶՀԱՅՐ ԳԻՈՐԳ ԶԱ//ՇԽԱՏԱՒՈՐ ԵՒ ԶԿԱՏԱՐԻՉ ՍԲՈՑ // ԵԿԵՂԵՑՈՑՍ ՅԻՇԵՑԷՔ»[49]:

Գիորգ ճարտարապետը արձանագրութիւն է թողել նաեւ Տաթեւի մայր տաճարում, սրահի երկրորդ մոյթի հարաւային կողին, 4 տող. «ԶՀԱՅՐ ԳԷՈ//ՐԳ ԱՇԽԱՏԱՒ//ՈՐ ՏԱՆՍ ՅԻՇԵ//ՅԷՔ Ի ՔՍ»[50]:

Ամփոփելով կատարուած ուսումնասիրութիւնը, կարող ենք Միծեռնավանքի տաճարի շինարարութեան երրորդ (ամրացման) փուլը, ինչպէս նաեւ վաղ տառաձեւերով արձանագրութիւնները մեծ հաւանականութեամբ թուագրել ԺԱ դարի կէսով:

4. ՐԱԽԻՇ

1653-1654 թ. գրուած մի Աւետարանի ընդօրինակողի կողմից յիշատակուած Մաղաւուզ երկրի Ռախիշ գիւղը[51] իր համադրութիւնն է ստանում զինուորական 50 եւ 25 հազարանոց մասշտաբներով քարտէզներում առկայ Արախշուն (Apax-

шун) հանդամասի անուան մէջ: Վերջինս գտնւում է Շալուայ գետի երկու վտակների՝ Ղորչուչայի եւ նրանից արեւելք մի փոքրիկ առուակի ստորին հոսանքների միջեւ 3 կմ երկարութեամբ հիւսիսից հարաւ ձգուող սարահարթում, Զորախաչ (Արիքլի) գիւղից 2-4 կմ հեռաւորութեան վրայ:

Արախշունի սարահարթի հիւսիսային հատուածում գտնւում է ԺԲ-ԺԳ դդ. կառուցուած յայտնի միանաւ բազիլիկ տիպի եկեղեցին (որը 1983 թ. պայթեցուել է ադրբեջանցի ճանապարհաշինարարների կողմից) շրջակայ ընդարձակ հանգստարանով, որտեղ աւերակների մէջ մասամբ պահպանուել են ԺԳ-ԺԷ դդ. մի քանի արձանագիր տապանաքարեր ու խաչքարեր[52]: Նոյն սարահարթի հարաւային հրուանդանի ծայրին շրջակայ Վազգէնաշէն եւ Մովսէսաշէն գիւղերի բնակիչները 1999 թ. աշնանը յայտնաբերել են մեծ չափերի արձանագիր խաչքար (Միշա Բալայեան, Սամուէլ Գորգիսեան եւ ուրիշներ): Մեզ յաջողուեց հետազօտել այն 2000 թ. յունիսին բանասէր, լուսանկարիչ Զորայր Ըռքոյեանի եւ շինարար, այս յօդուածի գրչագրերի հեղինակ Տիգրան Մեջլումեանի մասնակցութեամբ:

Խաչքարը գտնւում է ադրբեջանցի մելիորատորների կողմից տեղահան արուած տապանաքարերի, խաչքարերի եւ հիմնահատակ աւերուած եկեղեցու քարերի մի կոյտի մէջ, որն սպասում է խնամքով մաքրման ու հնագիտական հետազօտութեան: Կոթողը մեծ չափերի է (235x105x35սմ), կիսակլոր, թոյլ սլաքով աւարտուող վերնամասով: Ժամանակին, ըստ երեւոյթին, այն որմնափակուած է եղել իր շրջանակի գլանաձեւ զարդանախշը կրկնող, փոքր չափի քարերով, որոնցից երկուսն ընկած են հէնց կողքին: Զարդա-

© National Library of Armenia

նախշման՝ անսպասելիութեան չափ բարձր արուեստով այս կոթողը կարող է մրցել արցախեան խաչքարերի լաւագոյն նմուշների հետ: Արձանագրութիւնը փորագրուած է ներքեւի ձախ անկիւնից ամբողջ եզրագծով մինչեւ ներքեւի աջ անկիւնը: Ցաւոք, ջարդուածքի պատճառով բացակայում են վերջին մի քանի տառերը (7-8 հատ): Սղումներ եւ կցագրումներ գրեթէ չկան[53], եւ բնագիրն ընթերցւում է հեշտութեամբ.



ՅԱՆՈՒՆ Ա՛Ց, ԵՍ՝ ԳԵՐԳ, ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԷԶՍ Ի ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹ(Ի)Ի(Ն) ԻՆՁ ԵՒ ԱՄՈՒՍՆՈՑ ԻՄՈՑ ՄԻՆԱ-ՑԻՆ ԵՒ ԱՂԲԷՐԱՑՆ Զ...

Ամբողջութեամբ պահպանուած վերջին Զ տառը մենք համարում ենք տարեթիւ նշող, չնայեած այն անջատուած չէ կրկնակէտերով եւ չունի պատուոյ նշան (ի դէպ, այդպիսին չունի նաեւ Ա՛Ց - Աստուծոյ յապաւումը): ԱՂԲԷՐԱՑՆ բառից յետոյ կարող էր գրուած լինել ՄԵՐՈՑ կամ ԻԻՐՈՑ, որոնք Զ-ով չեն սկսւում, չենք մտաբերում նաեւ այդ տառով սկսուող որեւէ հարմար անձնանուն: Զ-ից յետոյ պահպանուել է նաեւ յաջորդ տառի մասնիկը (վերեւի եւ աջ կողմը լրիւ զոհ են գնացել ջարդուածքին): Դա տողից քիչ վեր փորուած կիսակլոր մասնիկ է, որը նոյնանում է ԿԱՆԿՆԵՑԻ բառի մէջ առկայ Կ-երի համապատասխան մասնիկների հետ: Այսպիսով, կարելի է ենթադրել, որ արձանագրութեան ջարդուած հատուածում գրուած է եղել «ՁԿ[(...՞) Թ(ՈՒԻ)Ն Հ(ԱՑՈ)Ց]» սպասելի արտայայտութիւնը, եւ թուագրել Գերգի խաչքարը 1310-ական թուականներով:

Արձանագրութեան մէջ յիշատակուող Գերգ իշխանը իր Մինայ տիկնոջ հետ նուիրատուական արձանագրութիւն է թողել Գանձասարի վանքում, գաւթի արեւմտեան պատի հիւսիսային մասում: Վեց տողանոց այդ արձանագրութիւնը կրկնում ենք ամբողջութեամբ.

«ԿԱՄԱԻՆ Ա՛Ց, ԵՍ՝ ԳԵՐԳ, ՈՐԴԻ ՀԱ//ՑՐԱՊԵՏԱՑ, ԵՒ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ՄԻՆԱ, ԻՇԽԱՆՈՒ//ԹԵԱՆ ԶԱԼԱԼԻՆ, ՄԻԱԲԱՆԵՑԱՑ ՍԲ ՈՒԽՏԻՍ, ՏՎԱՔ // ԸՆԾԱ: ՏՐ ՑՈՀԱՆԷՍ ԵՒ ՄԻԱԲԱՆՔՍ ՏՎԻՆ ՊԱՏԱՐԱԳ // ՆՈՐ ԿԻՐԱԿԷԻՆ: ԿԱՏԱՐԻՉՔՆ ԱՒՐՀՆԻՆ, ԽԱՓԱՆ//ՈՂՆ ԴԱՏԻ: ԹՎ :ՁԿԷ: (1318 թ.)»:[54]

Հասկանալի է, որ Բախիշի (Արախշուն) եկեղեցին Գանձասաքի պէս յայտնի հոգեւոր կենտրոն չէր, որպէսզի մտածենք, թէ Գերգ իշխանը, մի հեռու գաւառից գալով, խաչքար էր կանգնեցրել այնտեղ: Ուրեմն անկասկած է, որ Բախիշն ու նրա շրջակայքը պարզապէս եղել են այդ իշխանի տիրոյթները: Դա նշանակում է, որ շնորհիւ նորայայտ խաչքարի՝ մեզ յայտնի է դարձել Վայկունիք (հետագայում՝ Մաղաւուզ)[55] գաւառի իշխանի (կամ իշխաններից մէկի) անունը ԺԴ դարի սկզբներին:

Ինչպէս տեսանք, Գանձասարի 1318 թ. արձանագրութեան մէջ յիշատակուած է Գերգ իշխանի հօր անունը՝ Հայրապետ: Մեզ թւում է, որ այս վերջինի միւս որդու, այսինքն՝ Գերգի եղբօր տապանաքարն է փորագրուած վերը նշուած «պայթեցուած» եկեղեցու մօտ ընկած օրորոցաձեւ գերեզմանաքարին. «Ա՛ՑՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԲԱԽՏԱ, ՈՐԴՈ ՀԱՑՐԱՊԵՏԱ,// ՈՐ ԿԱՐԻ ԾԵՐՈՒԹԵ(ԱՄ)Բ ՎԱՂՃԱՆԵՑԱՒ: // ՑԻՇԵՑԷՔ // Ի ԲԱՐԻՆ: ԹՎԻՍ ՁԽԷ»[56]: Հայոց Զխէ (1298) թուականին վախճանուած եղբօր «կարի ծեր» լինելը նշանակում է, որ Գերգը եղել է Հայրապետի կրտսեր որդին:

Որ Գերգ եւ Հայրապետ անունները աւանդաբար շարունակուել են Վայկունիքի իշխանատոհմում, երեւում է Գանձասարի գաւթի մէկ այլ արձանագրութիւնից, որը թուական չունի, սակայն ըստ ամենայնի կարող է թուագրուել ԺԴ դարով: Բերում ենք գաւթի հիւսիսային պատի արեւելեան մասում գտնուող այդ վիմագրի սկիզբը. «ԿԱՄԱԻՆ Ա՛Ց, ԵՍ՝ ՀԱՑՐԱՊԵ//Տ, ՈՐԴԻ ԳԵՐԳԱ, ՄԻԱԲԱՆ//ԵՑԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ, ՏՎԻ // ԶԻՄ ՀՈԳՈ ԱՐԴԻՒՆՍ: ՍՈՔԱ ՏՎԻՆ...»[57]: Աւելացնենք, որ պատի նոյն հատուածում, հարեւան արձանագրութեան մէջ յիշատակւում է Գերգի միւս որդին՝ Սարգիսը («ԿԱՄԱԻՆ Ա՛Ց, ԵՍ ՍԱՐ//ԳԻՍ ՔԱՀԱՆԱ, ՄԻԱԲ//ԱՆԵՑԱ ՍԲ ՈՒԽՏԻՍ, // ՈՐԴԻ ԳԵՐԳԱ, ՏՎԻ // ԸՆԾԱ: ՍՈՔԱ ՏՎԻՆ//...)[58]: Բերուած արձանագրութիւնների մէջ կարեւոր է այն յանգամանքը, որ Գերգի որդիները (մէկը՝ քահանայ, միւսը՝ նոյնպէս հոգեւորական, քանի որ ասում է. «տվի զիմ հոգո արդիւնս») .«միաբանել են» Գանձասարի ուխտին եւ «տուել ընծայ»: Դա նշանակում է, որ նրանք Գանձասարի ծառայողներ չեն, այլ՝ մէկ ուրիշ եկեղեցու (վանքի): Դժուար չէ ենթադրել, որ այդ եկեղեցին կարող էր լինել Բախիշի կամ Արիքլիի ներկայումս աւերակ կառոյցներից մէկը:

5. ԱՂԲՐԱՁՈՐ

2000 թ. յունիսին մեզ յաջողուեց հետազօտել նաեւ Ղորչուչայ գետակի (Քաշաթաղում արդեն վերանուանուած Բախիշի գետակ) վերնահովտում գտնուող Աղբրաձոր (Ղորչուբուլաղ, ԺԹ դարում՝ Կիւրջաբուլաղ) եւ Հայթաղ (Ղորչու, ԺԹ դարում՝ Ղարաչանլի) գիւղերի բնակիչների կողմից (Ատոմ Կիւրէղեան, Արթուր Ցակոբեան եւ ուրիշներ) յայտնաբերուած փոքր չափերի եկեղեցիով պարսպապատ վանքը եւ մօտակայքի հանգստարանը:

Վանական համալիրը գտնւում է Աղբրաձորի դիմաց Բախիշ գետակի մէջ աջից թափուող առուակի ակունքներից քիչ ներքեւ, ձորակի հիւսիսային լանջին, զինուորական քարտէզներում Քեշիշթափա (Քահանայի բլուր) կոչուող գագաթից 1,5 կմ հիւսիս, խիտ անտառի մէջ (որի անունն էլ հետաքրքիր է՝ Գաղիմկիրմեշա, այսինքն՝ Հինաւուրց անտառ), ծովի մակերեւոյթից 1850մ բարձրութեան վրայ: Աղբրաձոր գիւղից այն հեռու է 2,5 կմ, սակայն հարկ է նշել, որ անցեալ դարի քարտէզներում Կիւրջաբուլաղ գիւղը տեղադրուած է Բախիշի աջ ափին,

© National Library of Armenia

այսինքն՝ եկեղեցու հարեւան ձորակի ներքեւի մասում, որտեղ ցայսօր պահպանւում են ուշմիջնադարեան գերեզմանոցի տապանաքարերը: Եկեղեցուց 150 մ դէպի հիւսիս, նոյն լեռնաբազուկի թամբի համեմատաբար հարթ հատուածում փռուած է ընդարձակ հանգստարանը: Ներկայումս եկեղեցու թաղը եւ ամբողջ պարսպապատը թափուել ու ծածկել են պատերի գրեթէ կէսը: Ջնայեած դրան, առաջին իսկ հայեացքից պարզ երեւում է, որ կոպտատաշ քարերով շարուած եկեղեցին ԺԱ-ԺԲ դարերի շինարարական ոճի ակնյայտ տարրեր ունեցող (պատերի սլացիկ բարձրութիւն, պայտաձեւ խորան, արեւմտեան միակ դռան վերեւում կիսակլոր բացուածք, պատերի վերին թաղատակի մասում ամբողջ եզրագծով կրածեւի խողովակաձեւ խոռոչներ) կառոյց է: Պատերը ներսից սւաղուած են ուշ շրջանում (հաւանաբար ԺԷ դ.): Չափերը ներսից. երկարութիւնը 420 սմ, լայնութիւնը արեւմուտքում 220 սմ, խորանի առջեւ՝ 240 սմ: Խորանի բացուածքը 200 սմ, խորութիւնը 215 սմ: Արեւմտեան միակ դռան բացուածքը 75 սմ:

Եկեղեցու մուտքի առջեւ թափուած են երկու մեծադիր, ջարդուած խաչքարերի ոչ լրիւ (երեք եւ երկու) կտորներ (երկուսն էլ՝ արձանագիր) եւ մէկ ուղղանկիւն տապանաքար: Տապանաքարի վրայ պարզ գաւազան է քանդակուած եւ ճակատին՝ փոքրիկ արձանագրութիւն. «ԹՎ ՌՂ» (1641 թ.): Փոխարէնը՝ երկու խաչքարն էլ կարող են դրուել նախորդ եւ յաջորդ դարերի խաչքարերից իւրայատուկ ոճով առանձնացող ԺԱ դարի խաչքարերի լաւագոյն (Ցաղաց քարի) օրինակների կողքին: Ջորակով մօտ 30 մ ներքեւ գլորուած են խաչքարերից մէկի ուղղանկիւն արձանագիր պատուանդանը եւ մի խորանազարդ պատուանդանի անարձանագիր քարերից մէկը:

Խաչքարերի արձանագրութիւնները փորագրուած են վարդեակների երկու կողմերում: Ցաւօք սրտի, առաջին (քիչ աւելի փոքր, երկու կտորի կիսուած) խաչքարի ձախ ներքեւի կտորը ջարդուած է, եւ մենք հնարաւորութիւն ունենք ընթերցելու միայն աջ կողմում երեւացող տառերը: Այստեղ երկու տողով գրուած է. «ՇԺԷ // ԷՐ» (1068 թ.): Երկրորդ (քիչ աւելի մեծ եւ երեք կտորի կիսուած) խաչքարի վարդեակի երկու կողմերի տառերն էլ պարզ ընթերցւում են (ձախ կողմում երեք տող է, աջում՝ հինգ): Արձանագրութիւնն ունի յետեւեալ բովանդակութիւնը.





ԹՎ(ԻՆ) Հ(ԱՅՈՑ)
ՇԺԸ (1069 թ.)
ԷՐ, ԵՍ՝ Գ-
ՐԻԳՈՐ՝
ԻՇԽԱՆ-
ԱՑ ԻՇԽ-
ԱՆ, ՈՐԴ-
Ի ԱՏՐ:

Ակնյայտ է, որ Գրիգոր իշխանաց իշխանի հայրանունը կիսատ է, հետեւաբար արձանագրութիւնը շարունակուել է խաչքարի պատուանդանի վրայ:

Ջորակում գտնուող ուղղանկիւն, չորս կողմից սրբատաշ պատուանդանի վրայի արձանագրութիւնը փորագրուած է արեւմտեան եւ հարաւային նիստերին

չորսական տողով: Այն նոյնպէս անվնաս է, գրուած է գրեթէ առանց սղումների[59] եւ կարդացւում է ամբողջութեամբ.



Արեւմտեան ճակատին.

ՀՈԳԵՒՈՐ ՏՐՆ ԻՄ ԵՒ ՎԱՐԴԱՊ-
ԵՏՆ ՍՈՍԹԵՆԷՍ ՓՈԽԵ-
ՑԱՒ ՅԱՇԽԱՐՀԷՍ ԱՌ ՔՄ: ԵՍ՝ ՆՈՐ-
ԻՆ ԵՂԲԱՒՐՈՐԴԻՍ ՍՏԵՓԱՆՈՍ

Հարաւային նիստին (շարունակութիւնը).

ԿԱԳՆԵՑԻ ԶՄԲ ՆՇԱՆՍ Ի ԲԱ-
ՐԵԽԱՒՍՈՒԹԻՒՆ ՏՆ ԻՄՈ,
ԶՈՐ ԴԱՍԵՑԷ ՔՄ ԸՆԴ ՄԲ ՀԱ-
ՑՐԱՊԵՏՍՆ ԻՒՐ: ԱՄԷՆ:

Բերուած բնագրերի համեմատութիւնից անմիջապէս երեւում է, որ ուղղանկիւն պատուանդանի վրայ շարունակւում է առաջին խաչքարի արձանագրութիւնը: Համընկնում են նաեւ խաչքարի ելուստի եւ պատուանդանի փոսի չափերը: Դրա հիման վրայ կարող ենք վստահօրէն պնդել, որ այլ աղբիւրներից մեզ անծանօթ Սոսթենէս վարդապետի եղբօրորդի Ստեփաննոսի արձանագրութիւնը գրուած է Հայոց ՇԺԷ (1068) թուականին:

Ինչ վերաբերում է Գրիգորի կիսատ հայրանունը, որի շարունակութիւնը կրող պատուանդանը չկարողացանք գտնել աւերակների մէջ[60], ապա միանգամայն պարզ է, որ ԱՏՐ տառերը Ատրներսէհի անուան սկիզբն են: Թ-ԺԴ դարերում այդ անուան բազմաթիւ յիշատակութիւններ ունենք թէ՛ Սիւնիքում, թէ՛ Արցախում: Ատրներսէհի էր Խաչէնի եւ Փառիսոսի իշխանների նախապապ Սահլ Սմբատեանի որդու անունը Թ դարի կէսերին[61]: Վերջինիս որդիներից մէկը Մեծ Մազրայի նշանաւոր խաչքարի թիկունքին Հայոց ՅԼ (881) թ. գրուած արձանագրութեան մէջ իրեն «Գրիգոր Ատրներսէհեան» կոչող «Սիւնեաց եւ Աղվանից իշխանն» է[62]: Ատրներսէհի էին վերջինիս երկրորդ որդի Սահակ Սեւադայի (որը դարձաւ Փառիսոսի հզօր իշխանութեան սկզբնաւորողը Ժ դարի առաջին կէսին) թոռը եւ սրա եղբօր երրորդ որդին (ընդ որում՝ երկրորդ որդու անունը Գրիգոր էր)[63]:

Ցաւօք սրտի, Մովսէս Դասխուրանցու շարադրանքն աւարտւում է Ժ դարի վերջով, եւ ԺԱ դարի համար Արցախի իշխանների անուններ յիշատակող սկզբնաղբիւրները քիչ են: Բայց Ստեփաննոս Օրբէլեանի եւ վիմագիր մի քանի վկայութիւններից գիտենք, որ Սիւնեաց իշխանաց իշխան Աշոտի որդի, 1051-1072 թթ. Բաղաց թագաւոր Գրիգորի անները Խաչէնի իշխան (թագաւոր) Սեւադան էր՝ Սիւնեաց բարեպաշտ տիրուհի դարձած Շահանդուխտ Երկրորդի հայրը («ի տանէն Աղուանից՝ դուստր նոցին թագաւորազինն մեծին Սեւադայի»)[64]: Նշենք նաեւ որ, Փառիսոսի թագաւորութիւնն այդ տարիներին արդէն գոյութիւն չունէր (վերջին իշխանը Գրիգորի որդի Փիլիպպէն էր), իսկ տարածքը բաժանուած էր Լոռու Կիւրիկեանների եւ Գանձակի Փաղլունեանների միջեւ[65]:

Այսքան սուղ տուեալների պայմաններում մենք այնուամենայնիւ հնարաւոր

© National Library of Armenia

ենք համարում ենթադրել, որ Աղբրաձորի արձանագրութեան մէջ 1069 թուականին իրեն յիշատակում է ո՛չ Խաչէնի եւ ո՛չ Փառիսոսի, այլ Դիզակի՝ այլ աղբիւրներից մեզ անյայտ իշխանաց իշխան, *Ատրներսէհի որդի* Գրիգորը:

Բազրատունեաց թագաւորութեան թուլացման արդիւնքում Ժ դարի երկրորդ կէսին Հայաստանի արեւելեան մասում ինքնուրոյն պետութիւններ դարձան ինչպէս Լոռին (Զորագետը), Փառիսոսը, Խաչէնը, Սիւնիքը (Բաղքը), այնպէս էլ Դիզակը (Գորոգու), որն ամենից քիչն է արտացոլուած պատմագրութեան մէջ: Թ դարի առաջին կէսում Ստեփաննոս Աբլ Ասաղի եւ Եսայի Աբու-Մուսէի օրօք ստեղծուած Դիզակի իշխանութիւնը[66] *ԺԺԱ դարերի սահմանագծին երկու անգամ կոչուած է թագաւորութիւն: Տումի գիւղի մօտ, Կարմիր Եղցու մի արձանագրութեան մէջ*[67]*, օրինակ, ասւում է. «Ի ՆԽԹ (1000 թ.) ԹՎ(ԻՆ) Հ(ԱՅՈՑ) ԵՒ Ի // ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆՍ ՏՆ ԳԱԳԻԿԱ, ՈՐԴՈ // ՄՈՒՍԷԻ, ԵՍ՝ ՍՈՓԻ, ԴՈՒՍՏՐ ՄՈՒՍԷԻ, ՇԻՆԵՑԻ // ՏՈՒՆ ԱՅ Ի ՓՐԿՈՒԹԻՒՆ ՀՈԳԻՈ ԻՄՈ ԵՒ // ԾՆՈՂԱՑ ԻՄՈՑ»*[68]*: Թաղավարդ գիւղի մօտ Ջողտ Պովածառ եկեղեցու՝ ներկայումս կորած մի խաչքարի վրայ Մակար Բարխուդարեանցը, Երուանդ Լալայեանցը եւ Լէօն կարդացել են Հայոց ՆԽԶ (997) թուականը, որից յետոյ՝ «յամս Աստուածապատիւ եւ հոգեւոր տեառն Գագիկայ Աղուանից իշխանաց իշխանի, ես՝ Կիրակոս, առաջնորդ Սուրբ ուխտիս...»*[69]*:*

Մովսէս Դասխուրանցին Եսայի Աբու-Մուսէի ենթակայ գաւառները թուարկում է այսպէս. «... Վերին Վայկունիք, Բերձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մխանք եւ Տրի գաւառ» («Պատմութիւն Աղուանից», գիրք Գ, գլուխ ԺԹ (Ի), էջ 325): Դիզակի իշխանութեան տարածքի այսպիսի ընդգրկմանը համապատասխանում է նաեւ Ամարասի (հարաւային Արցախի) եպիսկոպոսութեան սահմանների նկարագրութիւնը Գտչավանքի 1246 թ. շինարարական արձանագրութեան մէջ, որտեղ յիշատակւում են Հակարի գետից (որը հնում կոչւում էր նաեւ Աղաւնոյ - Աղունոյ) դէպի արեւելք ընկած տեղանունները. «... Ի ՀԱՂՈՒՆՈ ԳԵՏՈ ԻՆՁՈՒ ԵՐԱՍԽ, ԻՆՁՈՒ Ի ԱՒԱՁՆ ԳԵՏԱՀԱՏԻ, ՎԱԿՈՒՆԻՍ ՎԱՂԱՁՆԱԳԵՏՈՎ, ՔԱՐԱՏՆԻՍՆ ԽՈՋԱԲԵՐԴՈՎ, ՁԱՌԻՍՏ ԻՒՐ ԿԵՐՈՎ, ՀԱԿԱՐԻ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ, ԴԻԶԱԿՈ ԲԷԼՈՒԿԱՆ ԻՒՐ ԿԵՐՈՎՆ...» (Դիւան, պր. V, էջ 182-183: Շղատառերով ենք տուել մեր կողմից արձանագրութեան մօտիկից ուսումնասիրութեան արդիւնքում կատարած ճշգրտումները, որոնք ամբողջապէս կը հրատարակենք առաջիկայում):

Աղբրաձորի վանքի մերձակայ գերեզմանատան տապանաքարերը նոյնպէս կարող են համարուել հազուագիւտ գտածոներ: Նախ եւ առաջ, դա վերաբերում է այն խաչքարին, որը յար եւ նման է եկեղեցու առջեւի՝ Գրիգոր իշխանաց իշխանի եւ Ստեփաննոսի խաչքարերին: Ջարդուածքի պատճառով վարդեակի հատուածը չունեցող այդ կոթողը ընկած է պատուանդանի՝ գլանաձեւ զարդանախշեր ունեցող մեծ (աւելի մեծ, քան ձորակում ընկածն է) քարերի առջեւ, որից երեւում է, որ նա եղել է յուշարձանախմբի ամենից աւելի նշանակալի կոթողը[70]*:*

Աւելի պարզ ոճի տապանաքարերի ու խաչքարերի մէջ աչքի են ընկնում երկու խաչքարեր, որոնց զարդանախշը երկրաչափօրէն ճշգրիտ մշակուած բազմաթիւ խաչերից առաջացած մի իւրօրինակ

պատկեր է: Դրանցից միայն մէկն է արձանագիր՝ ճակատին ունենալով 1, իսկ հարաւային կողին՝ 11 տող: Ճակատին, խաչերից վերեւ արձանագրուած է թուականը.

ԹԻՎՆ ՈՂԳ ԷՐ (1244 թ.):

Հարաւային կողին շարունակութիւնն է.

ՈՐ ԵՐԿՈՒ	ԹԻՎՆ ՈՂԳ ԷՐ
ՀԱՐԱՋ-	ՈՐԵՐԿՈՒ
ԱՏՔ՝ ԳՐԻ-	ՀԱՐԱՋ
ԳՈՐԷՍ ԵՒ Մ-	ԱՏՔ ԳՐԻ
ԽԻԹԱՐ ԿԻ-	ԳՈՐԷՍ ԵՒՄ
ՍԱՒՐԵԱ	ԽԻԹԱՐ ԿԻ
ՓՈԽԵՑԱՆ,	ՍԱՒՐԵԱ
ԵՒ ՄԱՅՐՆ ԻՒՐ-	ՓՈԽԵՑԱՆ
Ե(Ա)ՆՑ ԽԱԹ-	ԵՒՄԱՅՐՆԻՒՐ
ՈՒՆ: ԱՓ ՈՂ-	ԷՆՑԽԱԹ
ՈՐՄԻ ՆՈՑԱՑ:	ՈՒՆԱ ՓՈՂ
	ՈՐՄԻՆՈՑԱՅ

Շարադրանքն, ինչպէս տեսնում ենք, պարզ է, կցագրուած են միայն 4-րդ եւ 11-րդ տողերի ՈՐ կապակցութիւնները, սղուած է միայն ԻՒՐԵԱՆՑ-ի Ա-ն: Արձանագրութեան մէջ յիշատակուած երեք «հարազատներն» էլ անծանօթ են այլ աղբիւրներից, եւ պէտք է ենթադրել, որ դրանք տեղի աւատական տոհմի ներկայացուցիչներ են եղել:

Գերեզմանատան ամենամեծ, վիշապանման տապանաքարն էլ է ուշագրաւ արձանագրութիւն կրում նիստերի վրայ. երկու տող՝ հարաւային, մէկ տող՝ հիւսիսային նիստին: Այս արձանագրութիւնը եւս պարզ է եւ ընթերցւում է անսխալ.

ԱՅՍՄԱՆԳԻՍՄԻՄԵՑԻՆՎԱՐԴԿՈ
ՄԱՅՐԷԶՐԵՑՈՅ ԿԻՐՍՈՍԹԵՆԻՍԻ

ՈՐՄԱՑԷՔՍԱՐՔԱՈԹԻՒՆ

ԱՅՍ ՀԱՆԳԻՍՏ Ի ՄԵԾԻՆ ՎԱՐԴԿՈ ՄԱՅՐԷԶՐԵՑՈ, ՀԱՒՐ ՍՈՍԹԵՆԻԱՒ, ԶՈՐ ՏԱՅԷ ՔՄ ԱՐՔԱ(Ց)ՈՒԹԻՒՆ:

Երեւում է, որ գրիչը սղում է Ց-երը (այդ թւում՝ ԱՐՔԱՑՈՒԹԻՒՆ բառի մէջ): Առաջին տողում է բայի փոխարէն սխալմամբ գրել է Ի, իսկ երկրորդ տողում գրել է ՍՈՍԹԵՆԻՍԻ, թէպէտ կարող էր ուրիշ շատ փորագրողների նման պահպանել է տառը:

Թւում է, որ արձանագրութեան մէջ յիշատակուած Սոսթենէսը այն նոյն վարդապետն է, որի վախճանուելու կապակցութեամբ եկեղեցու առջեւ խաչքար է դրել նրա եղբօրորդի եւ աշակերտ Ստեփաննոսը: Սոսթենէսի հօր՝ Վարդիկ Մայրէջրեցու յիշատակութիւնը Մեծ յորջորջումով թոյլ է տալիս ենթադրել, որ նա եղել է տեղի յայտնի իշխանը եւ գուցէ՝ վանքի հիմնադրման նախաձեռնողը:

Ուշագրաւ է նաեւ Մայրէջուր *տեղանուան յիշատակութիւնը: Այն յայտնի է ուսումնասիրողներին ԺԱ դարի երկու այլ յիշատակութիւններով Սիւնիքի հոգեւոր կենտրոններից մէկում՝ Վահանավանքում* (Մարէջուր *ձեւով): Վերջինիս ուղղանկիւն տապանաքարերից մէկի վրայ վեց տողով գրուած է. «Հ(ԱՅՈՑ) Թ(ՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆՆ) ՇԻԵ (1076): // ԶՔՈՒՐԴԻԿ // ՄԱՐԷԶՐԵՑԻ // ՑԱՂԱՒԹՍ ՑԻ//ՇԵՑԷՔ. ԱՂ//ԱՁԵՄՔ»*[71]*: Մէկ ուրիշ տապանաքարի վրայ 1084 թ. եռատող արձանագրութիւն է թողնուած Սողոմոն Մարէջրեցու յիշատակին («ԶՍՈՂՈՄՈՆ ՄԱՐ//ԷԶՐԵՑԻ ՑԱՂԱՒԹ//Ս ՑԻՇԵՑԷՔ: Թ(ՈՒԻՆ) ՇԼԳ»)*[72]*:*

Որքանով կարող ենք դատել Ստեփաննոս Օրբէլեանի հաղորդած հարուստ նիւթից՝ Սիւնիքում Մարէջուր *տեղանուն չկայ, եւ ուսումնասիրողներն արդարացիօրէն փնտրում են այն Արցախում*[73]*:*

© National Library of Armenia

Աղբրաձորի արձանագրութիւնը հաստատում է այդ կարծիքը: Մարէջուրը *նաեւ համադրւում է Հայոց Արեւելից կողմերից 1123 թ. Կիլիկիա մեկնած Օշին Հեթումեանի* Մայրեաց ջուրը *կալուածքի հետ՝ «Հանդէպ Գանձակայ», որի մասին յայտնում է ժամանակագիրը*[74]*: Գանձակ քաղաքի յիշատակութիւնը պատճառ է եղել, որպէսզի* Մայրեաց ջուրքը *տեղադրուի Ուտիքի Շակաշէն գաւառում կամ նրանից հարաւ՝ Արցախի Կողթ գաւառում: Սակայն «Մեծ Վարդիկ* Մայրէջրեցու» *տապանաքարի յայտնաբերումը Աղբրաձորի վանքի գերեզմանատանը լիովին հնարաւորութիւն է տալիս ենթադրել, որ* Մայրէջուրը *հէնց Աղբրաձորի շրջակայքի, այսինքն՝ Արցախի Վայկունիք գաւառի մի յայտնի տեղանուն է*[75]*:*

Հնարաւոր է, որ Մայրէջրի *աղաւաղումից է առաջացել մեր վանքից 4 կմ հարաւ, Բախիշի եւ Շալուայի հովիտների միջեւ բարձրացող սարահարթի վրայ գտնուող* Մունջուխլու *գիւղատեղիի (ուշ-միջնադարեան գերեզմանոցով) անուանումը, կամ Բախիշի (Ղորչուչայի) ձախ օժանդակի անուանումը՝* Մամելի*: Հնարաւոր է անգամ, որ* Մայրէջրի *աղաւաղման արդիւնքում է առաջացել հէնց* Մաղաւուզ *ուշմիջնադարեան տեղանունը (Վայոց Ձորի* Մայրադուրք *գիւղանունն, օրինակ, աղաւաղուելով, ԺԹ դարում դարձել էր* Մարաթուզ *գիւղ եւ լիճ)*[76]*: Քանի դեռ ուղղակի վկայութիւններ յայտնաբերուած չեն, ամենից հաւանական ենք համարում ենթադրել, որ* Մաղաւուզ *գիւղը գտնուել է Շալուայի Բչանիս վտակի երկու օժանդակների գետախառնուրդի մօտ, ԺԹ-ի դդ. Ալեակչի անունը կրող գիւղի տեղում, որը թարգմանաբար նշանակում է* «մաղագործ, մաղավաճառ»*:*

Աւարտելով աշխատանքը, պէտք է արձանագրենք, որ Հակարիի վերնահովտի նորայայտ յուշարձանները վկայում են տարածաշրջանի բաւականին բարձր կարգավիճակի մասին միջնադարեան Հայաստանի քաղաքական ու մշակութային ենթատեքստում, եւ ամենայն հաւանականութեամբ, ապագայ նոր յայտնագործութիւնները էլ աւելի հրապուրիչ անակնկալներ կը պարգեւեն գիտական աշխարհին:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Հ. Ղեւոնդ Ալիշան. Սիսական. Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ-Ս. Ղազար, 1893, էջ 267 (նաեւ քարտէզում): Д. Д. Пагирев. Алфавитный указатель к пятиверстной карте Кавказского края..., Тифлис, 1913; Е. Кондратенко. Карта Елисаветпольской губернии с показанием сельсих общин..., Тифлис, 1898.

2 Սամուէլ Կարապետեանը Աղվատխերը համադրում է Տաթեւի արքեպիսկոպոսանիստի 1730 թ. պտղոցուցակից յայտնի *Աղուէսահաքի* գիւղանուան հետ, որը դժուար է ճշգրտել կամ մերժել (Ս. Կարապետեան. Հայ մշակոյթի յուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցուած շրջաններում, Ե., 1999, էջ 132): Հմմտ. Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբէլեանի, Ե., 1942, էջ 42 («*...Հէրի..., Աղուէսահաքի..., Հակ...*»):

3 Տե՛ս, օրինակ, Վաղատնոյ վանքի Ս. Ստեփաննոս եկեղեցու հարաւային սրահում խաչքարի պատուանդանի վրայի արձանագրութիւնը. «ԵԱՃԱՊՍ ԿԱԿ//ՆԵԾԻ ՁԽԱՁՍ ...», որը Ս. Բարխուդարեանը սխալմամբ վերծանել է. «ԵՍ՝ ՃԱՊՍ» (Դիւան հայ վիմագրութեան, պր. II, Ե., 1960, էջ 105, N 304), այնինչ ճիշտը՝ «ԵՍ՝ ԱՃԱՊՍ» կարդալն է, ինչպէս առաջին իսկ հայեացքից երեւում է լուսանկարում յստակ նոյնացող Ա-երի համեմատութիւնից (տախտակ XXVIII, լուս. 109): *Աճապը (Աջաբ)* ուշմիջնադարեան տարածուած արական անուն է (հմմտ. Հ. Ա. Աճառեան, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Ե., 1942, էջ 203), իսկ *Ճապ* անուն այլուր չունենք:

4 Խորհրդատուութեան համար երախտագիտութիւնս եմ յայտնում Սուրէն Սաղումեանին:

5 Հմմտ. Ս. Բարխուդարեան. Միջնադարեան հայ ճարտարապետներ եւ քարգործ վարպետներ, Ե., 1963, էջ 22-25:

6 Բերենք դրա ամենագեղեցիկ օրինակներից մէկը՝ Ամաղուի Նորավանքի Ս. Կարապետ եկեղեցու գաւթի արեւմտեան մուտքի հարաւային կողի 1308 թ. խաչքարի քառատող արձանագրութիւնը. «ԵՍ՝ ԹԱՄԹԱ ԽԱԹՈՒՆՍ, ԿԱՆԳՆԵՑԻ ՁԽԱՁՍ Ի ՓՐԿ//ՈՒԹԻ(Ի)Ն) ՀՈԳՈ ԱԹԱՊԱԿ ՏԱՐՍԱՀՃԻՆ ԵՒ ՅԱՐԵՒՇԱ//ՏՈՒԹԻ(Ի)Ն) ՈՐԴՈՑ ԻՄՈՑ ԲԻ(Ի)ՐԹԷԼԻՆ ԵՒ ԲՈՒՂՏԱ-ՑԻՆ // :ԹԻՎՆ:ՉԾԷ: ՄՈՄԻԿ ՎԱՐԴՊԵՏ ՑԻԾ(ԵՑԷԳ)» (Դիւան հայ վիմագրութեան. պրակ III, Ե., 1967, էջ 243; Ս. Բարխուդարեան, նշ. աշխ., էջ 80):

7 Հ. Ա. Աճառեան. Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Ե., 1946, էջ 474-475:

8 Նոյն տեղում, հ. Ա, Ե., 1942, էջ 493:

9 Նոյն տեղում, էջ 446:

10 Մ. Հասրաթեան. Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, Ե., 1985, էջ 163:

11 Հ. Ա. Աճառեան. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ. Ե., 1948, էջ 148-150:

12 Ս. Կարապետեան. Հայ մշակոյթի յուշարձանները..., էջ 77:

13 Երկի առայժմ լաւագոյն ուսումնասիրութիւնը աշխարհաբար թարգմանութեան ներածութիւնն է (Ա. Ա. Աբրահամեան): Քանի դեռ չունենք քննական բնագիր, նախապատուութիւնն անհրաժեշտ է տալ հնագոյն ձեռագրի ընթերցումներին (ՄՄ 6271, ընդօրինակուած է 1513 թ.), որոնք հիմնականում արտացոլուած են մոսկովեան հրատարակութեան եւ աշխարհաբար թարգմանութեան մէջ (Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն տանն Սիսական: Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861; Ստեփանոս Օրբէլեան. Սիւնիքի պատմութիւն. Թարգմանութիւնը, ներածութիւնը եւ ծանօթագրութիւնները Ա. Ա. Աբրահամեանի, Ե., 1986): Փարիզեան (թիֆլիսեան) հրատարակութեան ընթերցումները տալիս ենք որտարակութեան ընթերցումները տալիս ենք որպէս տարբերակներ (Պատմութիւն նահանգին Սիսական. Արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց, Թիֆլիս, 1910):

14 Ուշ միջնադարում՝ *Պայինտուր-Բայանդուր* (Ժամանակագրութիւն..., էջ 42):

15 ԺԷ դարից՝ *Խոզանավար-Խազնավար* (Ժամանակագրութիւն..., էջ 42):

16 Ժամանակագրութիւն..., էջ 42: *Կարբինքի* ստուգաբանութեան մասին որպէս *ժայռ* տե՛ս Ցովգաբանութեան մասին որպէս *ժայռ* տե՛ս Ցովհաննէս Կարագեոզեան. Սեպագիր տեղանուններ (Այրարատում եւ հարակից նահանգներում), Ե., 1998, էջ 102:

17 Համադրութիւնն ըստ Մ. Հասրաթեանի (Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, էջ 155):

18 Ժամանակագրութիւն..., էջ 42; Հ. Ղ. Ալիշան, նշ. աշխ. էջ 267; Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 195; Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 132-133:

19 Միակ լուրջ տարընթերցումը Ճահուկում *Աղտաւից* յետոյ *Նորաշինիկ* գիւղանուան առկայութիւնն է, որի պատճառը տուեալ դէպքում կարեւոր չէ:

20 Ձեռ. ՄՄ 6271, էջ 668, 673; Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի..., էջ 375,379; Պատմութիւն նահանգին Սիսական..., էջ 516, 523:

21 Տե՛ս Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Ե., 1986, էջ 198, 287, 362; հ. 4, Ե., 1998, էջ 140, 765:

22 Թւում է, թէ նման սխալ է սպրդել նաեւ Սոթք-Աղաղիէճք անցման տեղում: Աղաղիէճքում առաջինը նշուած *Աւժէն* գիւղն, ըստ երեւոյթին, Սոթքի վերջինն է: Կարծում ենք նաեւ, որ հիմքում եղել է *Աւժէն* (*Աւձի գետ*-ից յետոյ), որը թելադրութեան տակ ձեռագրի ընդօրինակման ժամանակ յաջորդ *Անէժի* հնչողութեան ազդեցութեամբ վերածուել է *Աւժէնի*:

23 Ժամանակագրութիւն..., էջ 42:

24 Տարբ. *Ջեւասար, Ջիւասար: Ջիւնասարի վանք* (Օրբէլեան, գլ. ԿԲ) - *Сунасаръ - Սոնասար* համադրութեան հեղինակը Ցովհաննէս Կարագեոզեանն է: Սոնասարի բնակիչները գիւղի պահեստների ու գոմերի պատերի մէջ յայտնաբերել են եկեղեցու խոյակների, խաչքարերի ու պատուանդանների բազմաթիւ կտորներ, որոնք բարբարոսաբար կտրտուել ու շինաքարի են վերածուել ադրբեջանցիների կողմից (1936 թ. դրանք դեռեւս ամբողջական են եղել, ինչպէս երեւում է Ա. Ալեքպերովի լուսանկարից. А. Алекперов. К вопросу об изучении культуры курдов. - Известия Аз. ФАИА, том XXV, Баку, 1936, с. 37, рис. 3): Այդ կտորների զարդաքանդակների բացառիկ որակը ցոյց է տալիս, որ հողակոյտի տակ փակուած Ջիւնասարի եկեղեցու պեղումները պատմա-ճարտարապետական լուրջ անակնկալ են մատուցելու գիտական աշխարհին:

25 Տարբ. *Հունչաք*: Հետագայում՝ *Հօչանց* (Ժամանակագրութիւն..., էջ 42):

26 Տարբ. *Շապոկի* (հմմտ. Մ. Հասրաթեան, նշ. աշխ., էջ 156; А. Карагёзян, К локализации гавара Кашатаг. - ԼՀԳ. 1987, N 1, էջ 43):

27 Ժամանակագրութիւն Ստեփաննոս Օրբէլեանի..., էջ 42:

28 *Աղբակի* ստուգաբանութեան մի փորձ տե՛ս Ց. Կարագեոզեան, նշ. աշխ., էջ 201:

29 Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Индоевропейские языки и индоевропейцы, ч. II, Тбилиси, 1984, стр. 43-744:

30 Հր. Աճառեան. Հայերէն արմատական բառարան, հ. Բ, Ե., 1973, էջ 579-580:

31 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 196; Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 134-136:

32 Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 134: Պատճառն, ըստ երեւոյթին, վերծանութիւնը լուսանկարից կատարելն է եղել:

© National Library of Armenia

33 Իհարկէ, իբրեւ պատմական սկզբնաղբիւր պակաս կարեւոր չեն քաշաթաղեան գիւղանունների յիշատակութիւնները Տաթեւի զոյգ պտղացուցակներում, ձեռագրերի յիշատակարաններում, Մովսէս Դասխուրանցու եւ ԺԷ դ. պատմիչների մօտ:

34 Հմմտ. Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 131: Ս. Բարխուդարեանի մօտ մի երկիցս ցաւալի թիւրընթերցում է սպրդել. «ՆՈՐԱԿՆՈՒՆՔ ՀԱ(Ց)ԿԱՑ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ» (Դիւան..., էջ 194):

35 Մ. Հասրաթեան, նշ. աշխ., էջ 164:

36 «Քաշթաղուց գաւառն. Խանածախն..., Պայինտուրն..., Հալաքսն..., Խազնավարն..., Սթունիս..., Ղուշչի..., Միրիկն..., Հէրի...» (Ժամանակագրութիւն, էջ 42):

37 Մ. Ս. Հասրաթեան. Ծիծեռնավանք, ՊԲՀ, 1980, N 2, էջ 39-58 (վերահրատ. Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ, էջ 219-240); Paolo Cuneo. La basilique de Tsitsernavank dans le Karabagh. REArm., T. V, Paris, 1967; Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 192-193; Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 141-151 (այստեղ Ծիծեռնավանքում ընթերցուած վիմագրերի ամենից լրիւ հաւաքածոն է):

38 Գիտարշաւի ընթացքում խմբի կողմից ուսումնասիրուել են նաեւ այլ յուշարձաններ, որոնց մի մասը՝ նորագիւտ: Դրանցից վիմագրեր կան Սպիտակաջուր (Ականք-Աղբուլաղ) գիւղի աւերուած եկեղեցու եւ գերեզմանատան շրջակայքում եւ Մովսէսաշէնի (Քիւրդհաջի) գերեզմանոցում, բայց՝ աննշան բնագրերով:

39 Ըստ Յակոբ Սիմոնեանի եւ Յովհաննէս Սանամեանի՝ դա եղել է Ապաշխարողաց գաւիթ: Ի դէպ, այդ գաւթի տանիքը բարձրանալու հեշտութիւնն է եղել պատճառը, որ Ծիծեռնավանքի հարաւային պատի վերեւի հատուածում եւ չորս լուսամուտներից երեքի կողապատերին ԺԶ-ԺԷ դարերի այդքան շատ արձանագրութիւներ ու յիշատակի խաչեր են յայտնուել:

40 Վերեւի նեղ քարին գրուած է երեք տող. «ՈՎ ՏՐ ՔՄ Ա//ՋԱՏ ԵՂԲ//ԱՑՐ ՍԻՐՈՂ», իսկ ներքեւի երկար քարի վրայ՝ երկու տող. «ՋԳՐԻԳՈՐ ՋԱՆԱՐԺԱՆ // ԾԱՌԱՑՍ ՑԻՇԵՑԷՔ ՑԱՂԱԻԹՍ» (տե՛ս Դիւան, պր. V, էջ 192; Ս. Կարապետեան, նշ. աշխ. էջ 148, 150): Մեր կարծիքով, իրար տակ երկու քարի վրայ, իրարից տարբեր վիմագրեր են փորագրուած, թէպէտեւ՝ նոյն փորագրչի կողմից:

41 Տարբ. *Ծիծառնոյ* (Օրբէլեան, գլ. ԼԸ, (ԼԹ), էջ 152(208):

42 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 193; Մ. Հասրաթեան, նշ. աշխ., էջ 233; Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 148,150:

43 Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 143:

44 Պէտք է նշել, որ բառարաններում *աշխատաւոր* բառի այս իմաստը գրեթէ արտացոլուած չէ: Հր. Աճառեանը անգամ համարում է այն «նոր բառ», որի հետ ոչ մի կերպ հնարաւոր չէ համաձայնել: *Աշխատաւորի* այդ իմաստին հանդիպում ենք Բոի Եղցում, Երիցմանկանցում, Հերհերում, Գոշավանքում, Տաթեւում, Բղենոյ Նորավանքում եւ այլուր:

45 «Պատմութիւն Աղուանից», գիրք 3, գլուխ ԺԵ, էջ 317:

46 Օրբէլեան, գլ. ԽԶ, էջ 179-180 (Փարիզի հրատ. մէջ՝ գլ. ԽԷ); Դիւան հայ վիմագրութեան, պր. II, Ե., 1960, էջ 42:

47 Դիւան հայ վիմագրութեան, պր. II, էջ 42:

48 Օրբէլեան, գլ. ԽԵ, էջ 180:

49 Դիւան հայ վիմագրութեան, պր. II, էջ 45 (N 103):

50 Նոյն տեղում, էջ 21, N 32:

51 ԺԷ դարի յիշատակարաններ, հ. Գ, Ե., 1984, էջ 601: Մաշտոցի անուան Մատենադարանում պահուող այս Աւետարանի (ՄՄ 3647) 342բ երեսի յիշատակարանում ասւում է. «...արդ գրեցաւ Սբ. Աւետարանս ձեռամբ Մարտիրոս կղերիկոսի, որ էր նա ի յերկրէն Ծագաձորոյ, ի գեղջէն Խնծորեկոյ: ...ի թվին ՌԾԲ (1653) զստացաւ Սբ. Աւետարանս հեզահոգի Թադէոս էրէցն, ...որ էր նա բնական ի յերկրէն Մաղաւզոյ, ի գեղջէն Բախիշոյ, որ եւ եկեալ բնակեցաւ ի յերկիրս Ծարայ ի գեօղն Մոս»: Մաղաւուզ երկրի տեղադրութիւնը Ծալուայի աւազանում հաստատւում է երկու ուրիշ ձեռագրերի գրիչների կողմից Մաղայուզ (Մաղայոզ) երկրի Արտաշիբի (Արտայշիբի, Արտաշիպի) գիւղի յիշատակութեամբ (1615 եւ 1637 թթ.), որի համապատասխանութիւնը ԺԹ դարի գրականութեան մէջ յայտնի Արտաշաւա-Արտաշաւի (մեր դարում՝ Արտաշաւի, արցախցիների խօսքում՝ Արտաշաբի) գիւղի հետ կապած չի յարուցում (ԺԷ դարի յիշատակարաններ, հ. Ա, Ե., 1974, էջ 561; հ. Բ, Ե., 1978, էջ 699): Ադրբեջանցիները գիւղի եկեղեցու եւ գերեզմանատան քարերն օգտագործել են իրենց փոստատան շէնքը կառուցելու համար, որն այսօր կիսաքանդ սպասում է հնագէտների կողմից բարեխիղճ մաքրման աշխատանքներին: Շրջակայքում թափուած մի քանի քարերի վրայ կան նաեւ արձանագրութիւնների կտորներ, որոնցից մէկը թուագրուած է Հայոց ՋԼ (1481) թուականով (Ս. Կարապետեան, նշ. աշխ. էջ 176):

52 Հետազօտուած է Ս. Կարապետեանի կողմից (նշ. աշխ., էջ 168-169):

53 Կցագրուած է միայն երկրորդ ԵԻ-ը: ԲԱՐԷԽԱԻՍՈՒԹ(Ի)Ի(Ն) բառի մէջ աւելի սպասելի էր երկու վերջին (ԻՆ) տպչերի սղումը:

54 Դիւան հայ վիմագրութեան, պր. V, էջ 53: Բագրատ Ուլուբաբեան. Գանձասար, Ե., 1981, էջ

136: Надписи Гандзасара и hАвоцптука. Собрал и поттотовил к печати Иосиф Орбели, Пгр., 1919 (շարուածք), էջ 25:

55 Վայկունիք գաւառանուան վերջին, մեզ յայտնի յիշատակութիւնը վերաբերում է ԺԴ դարի վերջին: Նախորդ դարավերջին Սոկոլոյ գիւղի եկեղեցում պահուող ձեռագիր Աւետարանի մէջ Մակար եպիսկոպոս Բարխուդարեանցը կարդացել է Հայոց ՊԼԶ (1387) թ. Սարգիս վարդապետ գրչի թողած հետեւեալ յիշատակարանը. «Նախ հալածուելով փախայ Վակունիս գաւառ. ապա Ղարաբաղ, Ծափանիս գիւղաքաղաք, հուսկ ուրեմն վերստին եկի բնիկ երկիրս Ծար» (Մ. եպս. Բարխուդարեանց. Աղուանից երկիր եւ դրացիք..., Ե., 1999, էջ 115): Ի դէպ, *Վակունիս գաւառի* եւ *Ծար երկրի* տարբերութիւնն արձանագրող այս վկայութիւնը գուցէ հիմք դառնա վերջապէս յաղթահարելու պատմագրութեան մէջ անարդարացիօրէն արմատաւորուած այն թիւրիմացութիւնը, որի հեղինակները Վայկունիք-Վակունիս գաւառը Ծալուայ գետի վերնահովտի փոխարէն տեղադրում են Թարթառի եւ նրա վերին վտակների աւազանում: Փաստօրէն միայն Մակար Բարխուդարեանցն ու նրա հետեւորդներն են (օրինակ Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարանի հեղինակները), որ Մովսէս Դասխուրանցու մօտ առկայ *Վայունիք* գիւղի (Ջերմաջուր, Իստիսու) յիշատակութիւնը («Ատրներսէհ շինէ զբերդն Հանդու եւ զապարանս իւր եղեալ ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր եւ բաղանիք արքունական են», գիրք Գ, գլ. ԻԲ(ԻԳ), էջ 340) արդարացիօրէն անբաւարար են համարում *Վայունիք գիւղ - Վայկունիք գաւառ* նոյնացման համար:

56 Ց. Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 169 (ճշգրտումները մերն են - Ա. Ց.): Տեղին նշենք, որ հնարաւոր չէ ընդունել հեղինակի այն ենթադրութիւնը, որ *Արիքլի* անունը կարող է կապ ունենալ Աղահէճքի *Արքուգետ* աւանի հետ, որի մասին Թ դարի դէպքերի առնչութեամբ գրում է Մովսէս Դասխուրանցին («Պատմութիւն Աղուանից», գիրք Գ, գլ. ԺԹ, էջ 327), ինչպէս նաեւ նոյնացուել Օրբէլեանի գիւղացանկի *Արքոյ* գիւղի հետ: Արժէքաւոր աշխատանքի բազմաթիւ յաջող համադրութիւնների կողքին, Աղահէճքի գիւղացանկի հերթականութեան պարզաբանումից յետոյ չեն կարող ընդունելի լինել նաեւ Հարճլանք - Հաջիլար, Մախուլն - Մալիբեյ եւ Մեղի - Մըղիդարայ համադրութիւնները:

57 Դիւան, պր. V, էջ 58; Բ. Ուլուբաբեան, նշ. աշխ., էջ 128; И. Орбели, նշ. աշխ., էջ 16:

58 Դիւան, պր. V, էջ 59; Բ. Ուլուբաբեան, նշ. աշխ., էջ 124; И. Орбели, նշ. աշխ., էջ 17: Այն, որ *Սարգիս* անունը նոյնպէս տարածուած է եղել Վայկունիքում, երեւում է Արջաձոր (Աղջայեազի) գիւղի՝ զոյգ խաչաքանդակներով խաչքարի յապճէպ գրուած արձանագրութիւնից. «*Ի թիւն ՈՁԴ (1235 թ.), ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՋԱԼԱԼԻՍ, ԵՍ՝ ՍԱՐԳԻՍ, ԿԱՆԳԵՑԻ ԽԱՉՍ ՋԱՑՍ ԻՆՁ ԵՒ...*» (Ս. Կարապետեան, նշ. աշխ., էջ 173):

59 Կցագրման միակ դէպքը ճակատի վերջին տողի ԵՂԲԱՒՐՈՐԴԻ բառի մէջ է, որտեղ Ի-ի հորիզոնական գծիկը կցուած է նախորդ Բ-ին իբրեւ երկրորդ հորիզոնական ելուստ:

60 Միայն ցաւել կարելի է, որ այդ փնտրտուքը կարող է յաջող աւարտուել շատ մեծ մաքրման աշխատանքների արդիւնքում:

61 «Պատմութիւն Աղուանից», գիրք Գ, գլ. ԻԲ (ԻԳ), էջ 340:

62 Դիւան, պր. IV, Ե., 1973, էջ 334:

63 «Պատմութիւն Աղուանից», գիրք Գ, գլ. ԻԲ (ԻԳ), էջ 341: Տեղին նշենք, որ ընդունելի չեն Բ. Ուլուբաբեանի փորձերը՝ Խաչէնը տեսնել Փառիսոսի կազմում մինչեւ վերջինիս անկումը ԺԱ դ. կէսերին (Բ. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը X-XVI դարերում, Ե., 1976, էջ 102-104): Մովսէս Դասխուրանցու, Անանիա Մոկացու, Ստեփաննոս Օրբէլեանի (Տաթեւի հիմնարկէքի կալուածագրի) եւ Կոստանդին Ծիրանածնի բազմատեսակ տեղեկութիւնները ցոյց են տալիս, որ Սահակ Սեւադայի եղբօրից սկսած՝ Խաչէնում ձեւաւորուել է մի ուրոյն իշխանատոհմ:

64 Օրբէլեան, գլ. ԾԸ, էջ 233: Հմմտ. Գ. Մ. Գրիգորեան, Վիմագրութիւններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, - «Պատմա-բանասիրական հանդէս», 1980, N 2, էջ 164-165:

65 Մեծին Վարդանայ Բարձրաբերդեցւոյ Պատմութիւն տիեզերական. Ի լոյս ընծայեաց Մ. Էմին, Մոսկվա, 1861, էջ 134-135; Բ. Ուլուբաբեան, նշ. աշխ., էջ 92-95:

66 Իշխանութեան տարածքի մասին տե՛ս ստորեւ:

67 Ներկայումս քարը պահւում է Ստեփանակերտի երկրագիտական թանգարանում:

68 Դիւան, պր., V, էջ 173:

69 Մ. եպիսկ. Բարխուտարեանց. Արցախ, Բաքու, 1895 էջ 91; Ե. Լալայեանց, Վարանդա, հ. 2, էջ 8; Ա. Բաբախանեանց, Ուխտաւորի յիշատակարան, Շուշի, 1885, էջ 5; Դիւան, պր. V, էջ 169:

70 Ենթադրում ենք, որ խաչքարի ներքեւի, արձանագրուած հատուածը հեռացուել է գերեզմանատնից եւ օգտագործուել որեւէ շինարարութեան մէջ: Հրաշալի կլինէր, եթէ այն մի օր գտնուէր:

71 Գ. Գրիգորեան, Վահանավանքի պեղումների նախնական արդիւնքները (1966-1970 թթ.), - Լրաբեր հասարակական գիտութիւնների, 1970, N 10, էջ 89:

72 Դիւան հայ վիմագրութեան, պր. II, էջ 139: Քուրդիկ եւ Սողոմոն Մարէջրեցիների մասին այլ

© National Library of Armenia

աղբիւրներից ոչինչ չգիտենք:

73 Հայաստանի եւ հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 677; Բ. Ուլուբաբեան, Խաչէնի իշխանութիւնը, էջ 96: Ցայտնի իրողութիւն է, որ Փաղլունեանների առաջխաղացման հետեւանքով ԺԱ դ. երկրորդ կէսին Բաղք են տեղափոխուել եւ մասնաւորապէս Վահանավանքում թաղուել արցախցի աշխարհիկ ու հոգեւոր բազմաթիւ իշխանաւորներ («բազում թագաւորք եւ թագուհիք Աղուանից». տե՛ս Օրբէլեան, էջ 175), այդ թւում՝ Ստեփաննոս Աղուանից կաթողիկոսը (վերջինիս անթուակիր տապանագիրը տե՛ս Դիւան հայ վիմագրութեան, պր. II, էջ 139; Գ. Գրիգորեան, նշ. աշխ., էջ 90) եւ Սոփի թագուհին (վերջինիս 1081 թ. տապանագիրը տե՛ս Գ. Մ. Գրիգորեան. Վիմագրութիւններ Վահանավանքի 1970-1978 թթ. պեղումներից, էջ 162):

74 Սամուէլի քահանայի Անեցւոյ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց..., Վաղարշապատ, 1893, էջ 117 («Ի ՇՀԲ ամին ի բռնութենէն Տաճկաց եւ Օշին իշխանն ի ժառանգութենէ իւրմէ, որ կոչի Մայրեաց ջուրք՝ հանդէպ Գանձակայ, ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր՝ ազատագունդ իշխանօքն եւ ամենայն գահիւն...»): Հմմտ. Հ. Ղ. Ալիշան, Սիսուան, Վենետիկ-Ս. Ղազար, 1885, էջ 46:

75 Այդ դէպքում, եթէ *Մայրեաց ջուրք - Մայրէջուր* համադրութիւնը պահպանւում է, ապա պէտք է մտածենք, որ «հանդէպ Գանձակայ» ասելով Սամուէլ Անեցին կամ նրա աղբիւրը նկատի են ունեցել ողջ Հայոց Արեւելից կողմերը:

76 Օրբէլեան, էջ 372; Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 3, էջ 676, 717:



Պատկեր 1

Աղբաթխէրտի օրորոցաձեւ տապանաքարը

Պատկեր 2

Աղբաթխէրտի ուղղանկիւն տապանաքարը

Պատկեր 3

Աղբաթխէրտի խաչքարը



Պատկեր 4

Միրիկի եկեղեցու բարաւորի արձանագրութիւնը

© National Library of Armenia

Պատկեր 5
Ծիծեռնավանքի հնագոյն արձանագրութիւնը

Պատկեր 6
Ծիծեռնավանքի նորայայտ արձանագրութիւնը

Պատկեր 7
Բախիշի խաչքարը

Պատկեր 8
Բախիշի խաչքարը (դետալ)

Պատկեր 9
Աղբրաձորի վանքի գերեզմանատան խաչքարը

Պատկեր 10
Աղբրաձորի՝ Գրիգոր իշխանաց իշխանի արձանագրութեան ձախ կէսը

Պատկեր 11
Աղբրաձորի՝ Գրիգոր իշխանաց իշխանի արձանագրութեան աջ կէսը

Պատկեր 12
Աղբրաձորի՝ Ստեփաննոսի խաչքարի արձանագրութիւնը

© National Library of Armenia

Պատկեր 13
Աղբրաձորի պատուանդանի արձանագրությունը (արեւմտեան ճակատ)



Պատկեր 14
Աղբրաձորի պատուանդանի արձանագրությունը (հարաւային ճակատ)

Պատկեր 15a
Աղբրաձորի ԺԳ դարի խաչքարի
արձանագրությունը (ճակատի մաս)

Պատկեր 15b
Աղբրաձորի ԺԳ դարի խաչքարի
արձանագրությունը (կողի վերեւի կէս)

Պատկեր 15c
Աղբրաձորի ԺԳ դարի խաչքարի
արձանագրությունը (կողի մէջտեղի կէս)

Պատկեր 15d
Աղբրաձորի ԺԳ դարի խաչքարի
արձանագրությունը (կողի ներքեւի կէս)

Պատկեր 16
Աղբրաձորի վիշապաձեւ տապանաքարի արձանագրությունը (I-II տող)

Պատկեր 17
Աղբրաձորի վիշապաձեւ տապանաքարի արձանագրությունը (III տող)

© National Library of Armenia


ՀԱԿԱՐԻԻ ՎԵՐՆԱՀՈՎԻՏ
ՄԱՍՇՏԱԲ 1 : 225000
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ՎԱԿՈՒՆԻՍ Պատմական գիւղեր եւ գիւղատեղիներ
Հայթաղ Այլ բնակավայրեր
Եկեղեցիներ կամ վանքեր
Տապանաքարեր եւ խաչքարեր
Հին կամուրջներ
ՄԱՀՄԱՆՆԵՐ
Սիւնիքի եւ Արցախի սահմանը
Սիւնիքի եւ Արցախի գաւառների սահմանները
Հայթաղ
Աղբրաձորի վանք
ՇԱԼՈՒԱՑ
Աղաքելոց
Ալեակչի
Չորմանք
Չորախաչ
Մովսեսաշէն
Մունջուխլու
Ղախիշի վանք
ՎԱԿՈՒՆԻՍ
Արջաձոր
ՎԱՂԱՋԻՆ
ԱՐՏԱՇԱՒԻ
ՍՊԻՏԱԿԱՋՈՒՐ
Կապոսի վանք
ԵՋՆԱԳԱՄԵՐ
ԱՐՈՒԱԿԱՆ
Ղազարապատ
ՀԱԿ
ՄՇԵՆԻ
ՎԱՐԱՋԳՈՄ
ՍՈՆԱՍԱՐ
ՄԻՐԻԿ
ԱՂԲԱԹԽԵՐՏ
ՀԷՐԻԿ
Գանձայ
Եաղին
Մկնատուկի խաչի վանք
ՀՈՉԱՆՑ
Եղցահող
ՀԱՑԵԼԵԱԿ
ՍԹՈՒՆԻՍ
Զիրիկ
ՄԵԾՇԷՆ
Մելիքաշէն (ԱՐՔՈՒԳԵՏ)
Բերդոր
ՀԻՆՇԷՆ
ԱՐԱՀՈՒԾ
Մանքիզ
ԽՈՋՆԱՎԱՐ
Ճամբարխաչ
ՎԱՂԱՏՈՒՐ
ԽՆԱՑԱԽ
ՇԱԲԱԿԻ
ԱՐԱՒԻՍ
ՏԵՂ
Խրոով
ԿՈՌՆԻՁՈՐ
ԽՆՁՈՐԵՍԿ
Վանոցայ
ՀԱՐԱՐ
ԲԱՁՄԱԾԱԿԱՐ
Դաշտադապտ
ԳՈՐՈՒ
ՀԱԿԱՐԻ
ՔՐՕՆՔ
ԱՄՈՒՏԵՂ
ՔԱՇՈՒՆԻՔ
Ղարաբաղ
Գորիսի
Հոչանց
Ղարաբուլաղ
Ղարաբաղ
Ղարաբաղ
Ղարաբ